ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՐԶԵՐԻ ԱՄԱՍԻԱ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության հաշվետվություն

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ

Բովանդակություն

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1. ԱՄԱՍԻԱ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 7

1. 1. Վարչատարածքային բարեփոխումների տեսամեթոդական հիմնադրույթները և առանձնահատկությունները Ամասիա և Թումանյան համայնքներում 7

ԳԼՈՒԽ 2. ԱՄԱՍԻԱ և ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 30

2.1. Համայնքների բյուջեի ծախսային և եկամտային ցուցանիշների վերլուծություն 30

2.2. Ամասիա և Թումանյան համայնքների խոշորացման գործընթացի մշտադիտարկում քանակական մեթոդաբանության կիրառմամբ 37

Եզրակացություններ և առաջարկություններ 46

Ներածություն

Սոցիալ-տնտեսական ներկայիս բարդ իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում մեր Հանրապետությունում վերջին տարիներին տեղի ունեցած վարչատարածքային փոփոխությունների արդյունքների վերլուծություն իրականացնել առանձին համայնքների մասով, որտեղ հատկապես բարձր է խոշորացված համայնքների կազմում առկա բնակավայրերի բնակիչների դժգոհությունները և խոշորացման գործընթացի բացասական ազդեցությունը: Այս առումով կարևոր է իրականացնել համայնքի բյուջետային գործընթացների վերլուծություն, զարգացման ծրագրերի արդյունքների ամփոփում, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատում: Այս ամենը հնարավորություն կտա պարզելու համայնքային կյանքում առկա դժվարությունները, հիմնախնդիրները և բաղթողումները:

Յուրաքանչյուր համայնքի համար չափազանց կարևոր գործընթաց է իրենից ներկայացնում բյուջետային գործընթացը. այն պետք է լինի հնարավորինս կատարյալ, առանց թերությունների և շեղումների, հակառակ պարագայում բյուջետային տարին կարող է սխալ պլանավորվել և արդյունքում համայնքի առջև ծառացած հիմնախնդիրները մնան անլուծելի: Այս առումով կարևոր է նաև համայնքի զարգացման ծրագրերի արդյունավետ մշակումը և պլանային իրականացումը: Ցանկացած գործընթաց, որը առնչվում է համայնքային կյանքի հետ, կարևոր է կյանքի կոչել առանց շեղումների, քանզի բոլոր գործընթացները փոխադարձ կապված են միմյանց հետ, և մեկ ցուցանիշի շեղումը կարող է բերել ընդհանուր արդյունքի խափանմանը: Դրանք կարող ենք բերել համայնքի խնդիրների լուծման ոչ արդյունավետ տարբերակների կիրառմանը, որոնք էլ զուգահեռ կհանգեցնեն նոր խնդիրների առաջացմանը:

2011թ. նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը, որի նպատակն էր փոքր և թույլ համայնքները միավորել խոշոր համայնքի կազմում և ձևավորել տեղական ինքնակառավարման նոր մոդել:

ՀՀ կառավարությունը հայեցակարգի գործադրումը համարելով հրատապ և նպատակահարմար, խոշորացրեց Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում շուրջ 142 համայնքներ (Շիրակ՝ 43 համայնք, Լոռի ՝ 82 համայնք, Տավուշ՝ 17 համայնք): ՀՀ-ում առկա 502 համայնքից 54-ը խոշորացված համայնքներ են: Մինչ միավորումը ՀՀ-ում կար 915 համայնք, որոնց 48%-ն ուներ 1000-ից պակաս բնակչություն: Մինչև համայնքների խոշորացումը ՀՀ-ը բաժանված էր 48 քաղաքային, 871 գյուղական և Երևանի՝ 12 թաղային համայնքների: Համայնքների խոշորացման գործընթացի մեկնարկից սկսած՝ ՀՀ տարբեր մարզրերում արդեն ձևավորվել է 54 խոշորացված համայնք՝ 486 բնակավայրերի միավորմամբ: Համայնքների խոշորացման գործընթացը շրջադարձային էր ՀՀ սոցիալ-տնտեսական, տեղական ինքնակառավարման և քաղաքական կյանքում:

Կառավարության նախաձեռնությամբ նոր փոփոխություններով 2021թ. Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում ձևավորվեցին համայնքային ևս 11 փնջեր՝ 186 համայնքների միավորմամբ, որոնց մի մասն արդեն խոշորացված համայնքներն էին:

ՀՀ համայնքների խոշորացման գործընթացը սկսվել է 2013թ-ից: Բարեփոխումների առաջին փուլն ընդգրկել է 3 պիլոտային համայնքներ (Դիլիջան, Տաթև և Թումանյան)[1], որոնցից վերջինս՝ Թումանյանի համայնքը, մեր կողմից իրականացվող հետազոտության օբյեկտն է: Սակայն Լոռու մարզում գտնվող Թումանյան քաղաքը հարակից վեց համայնքների(Աթան, Ահնիձոր, Լորուտ, Շամուտ և Քարինջ) խոշորացվել են 2016թ-ին: Հիշատակենք, որ խոշորացմանը կողմ է քվեարկել 1007 մարդ կամ՝ հանրաքվեին մասնակցած անձանց 68%-ը[2]:

Հաշվի առնելով այդ գործընթացների կարևորությունը սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի և Լոռու

[1] Մասնակցային ախտորոշումն և պլանավորման մեթոդները. Դիլիջան, Թումանյան և Տաթև համայնքներ https://celog.am/hy/1/Reform/ReformDetail?reformId=45 , 06.06.2022թ.
[2] Խոշորացված Թումանյան համայնք, https://www.gov.am/files/meetings/2008/213.pdf , 06.06.2022թ.:

մարզի Թումանյան համայնքի սոցիալ-տնտեսական, ֆինանսական և ժողովրդագրական վիճակի վերլուծություն և գնահատում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Ամասիա և Թումանյան խոշորացված համայնքների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակի փոփոխությունը մինչև խոշորացումը և խոշորացումից հետո ընկած ժամանակահատվածներում:

Նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

● Ուսումնասիրել խոշորացված համայնքների փորձը, առկա խնդիրները,

●Գնահատել համայնքների խոշորացման սոցիալ-տնտեսական, ֆինանսական ու ժողովրդագրական հետևանքները, ռիսկերը և դրական արդյունքները,

● Պարզել համայնքներում բնակիչների վերաբերմունքը, վերջիններիս կարծիքը գործընթացի վերաբերյալ

Ուսումնասիրությունն ունի կարևոր գիտակիրառական նշանակություն, մասնավորապես խոշորացված համայնքների հեռանկարային սոցիալ-տնտեսական և պետական անվտանգության ապահովման ծրագրերի կազման ժամանակ

Հետազոտության ընթացքում օգտագործվել են հիմնականում ՀՀ ԱՎԿ-ի պաշտոնական տվյալները, համայնքների խոշորացմանը վերաբերող բազմաթիվ պաշտոնական զեկույցները և դաշտային էթնոսոցիալական հետազոտությունների արդյունքները:

Հետազոտության ընթացքում իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները՝.

- Խոշորացված որոշ համայնքներ այցելություն, տեղում իրավիճակին ավելի հանգամանալից ծանոթանալու նպատակով,
- Բնակչության և ՏԻՄ շրջանում իրականացվելիք հարցաթերթերի մշակում,

- **դաշտային էթնոսոցիալական հետազոտությունների իրականացում,**
- **Տեղեկատվական հարցումներ ՏԻՄերին,**
- **Ֆոկուս-խմբային հարցումներ բնակչության շրջանում,**
- **Բյուջեների մոնիթորինգ և վերլուծություն,**
- **Հարցումների արդյունքների ամփոփում,**
- **Խոշորացված համայնքներում կառավարման, ֆինանսական, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծություն**

Խոշորացված համայնքների *ժողովրդագրական իրապայմաններն* ուսումնասիրելիս ուշադրություն է դարձվել բնակչության թվի շարժընթացին, բնական վերարտադրությանը, սեռատարիքային կառուցվածքի փոփոխությանը, ամուսնությունների և ամուսնալուծությունների և միգրացիայի ընթացքին՝ մինչ խոշորացումը և խոշորացումից հետո ընկած ժամանակահատվածներում:

Սոցիալական ոլորտի ուսումնասիրության ժամանակ թիրախավորվել է բնակչության կրթական ոլորտի, առողջապահության և մշակութային կյանքի վրա:

Տարաբնակեցում. Ուսումնասիրվել է, թե քաղաքային և գյուղական տարաբնակեցման կառուցվածքում ինչպիսի փոփոխություններ են գրանցվել:

Զբաղվածություն. Աշխատաշուկայի և զբաղվածության կառուցվածքի փոփոխություն: Վերլուծության է ենթարկվել, թե ինչ նոր մասնագիտություններ են ի հայտ եկել, նոր ձեռնարկություններ շահագործվել կամ ինչ ձեռնարկություններ են փակվել: Պարզել նոր ձեռնարկությունների ստեղծումը կամ փակվելը կապված է խոշորացման հետ, թե ոչ:

Կյանքի որակ. Այս շրջանակներում դիտարկվել է կրթական մակարդակի փոփոխություն, բնակարանային պայմանների բարելավում, խոշորացված համայնքների միջավայրի և բնակարանային և կոմունալ պայմանների բարելավում: Ազգաբնակչության եկամտի և ծախսերի մեջ ինչպիսի փոփոխություններ են գրանցվել: Բնական և տեխնածին աղետները ինչպիսի ազդեցություն են ունեցել համայնքների բնակչության կյանքի վրա և համայնքների խոշորացումը որևէ ազդեցություն ունեցել է այդ խնդիրների լուծման վրա:

ԳԼՈՒԽ1. ԱՄԱՍԻԱ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Վարչատարածքային բարեփոխումների տեսամեթոդական հիմնադրույթները և առանձնահատկությունները Ամասիա և Թումանյան համայնքներում

Համայնքների խոշորացման գործընթացը շրջադարձային էր ՀՀ սոցիալ-տնտեսական, տեղական ինքնակառավարման և քաղաքական կյանքում:Մինչև «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի ընդունումը(1995թ. դեկտեմբերի 11), ՀՀ տարածքը բաժանված էր 37 շրջանների և 4 խոշոր քաղաքների(Երևան, Լենինական, Կիրովական և Աբովյան): 1996թ. հունվարի 1-ից հանրապետությունը բաժանվեց 11 մարզերի, այդ թվում Երևան քաղաքը՝ մարզի կարգավիճակով: Մինչև համայնքների խոշորացումը ՀՀ-ը բաժանված էր 930 համայնքների, այդ թվում 48 քաղաքային, 871 գյուղական և Երևանի՝ 12 թաղային: ՀՀ-ում կա 49 քաղաք(ներառյալ մայրաքաղաք Երևանը) և 952 գյուղական բնակավայր, որոնցից 8-ը ներառված են քաղաքային համայնքների, իսկ մնացած 944-ը՝ գյուղական համայնքների կազմում:

Համայնքների խոշորացման գործընթացի մեկնարկից սկսած՝ ՀՀ տարբեր մարզերում արդեն ձևավորվել է 54 խոշորացված համայնք՝ 486 բնակավայրերի միավորմամբ: Վերջին փնջերը ձևավորվեցին 2020թ. տարվա գարնանը: Խոսքը Տավուշի մարզի Իջևան և Լոռու մարզի Լերմոնտովո խոշորացված համայնքների մասին է: Նոր փոփոխություններով 2021թ. Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում ձևավորել են համայնքային 11 փնջեր՝ 186 համայնքների միավորմամբ:

Անկախության տարիներին ՀՀ տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափություններն էլ ավելի խորացան, մասնավորապես ֆինանսական, մարդկային և տնտեսական ռեսուրսների գերկենտրոնացում տեղի

ունեցավ մայրաքաղաք Երևանում: Դրանով պայմանավորված ՀՀ կառավարությունը XXIդ. սկզբին տարածքային համաչափ զարգացումն ընդունեց հիմնական ռազմավարական գերակայություններից մեկը: Իշխանությունները տարածքային զարգացման անհամաչափությունների պատճառներից մեկը համարել է տեղական ինքնակառավարման համակարգում մեծ թվով փոքր և թույլ կարողություններով համայնքների առկայությունը, խնդիր է դնում իրականացնել գյուղական համայնքների խոշորացում և միջհամայնքային միավորումների ստեղծում:

ՀՀ կառավարության համայնքների խոշորացման ծրագիրը հավանության արժանացավ ՀՀ Ազգային ժողովի 2008թ. ապրիլի 30-ին[3]: Համայնքների խոշորացման սկզբունքներից մեկը վերաբերում է մարդկային ռեսուրսների ապահովվածությանը, ինչը անմիջական փոխկապակցվածության մեջ է գտնվում բնակչության սոցիալ-ժողովրդագրական գործընթացների հետ: Իսկ համայնքների խոշորացման չափորոշիչներից առնվազն երկուսը վերաբերում է համայնքների բնակչության ժողովրդագրությանը[4]: ՀՀ կառավարությունը համայնքների խոշորացումից ակնկալվող արդյունքներից մեկը համարել է բնակչության թվի աճը:

2011 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»: Դրանով իսկ ՀՀ կառավարությունը հաստատեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են՝ համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքի կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից: 2016 թվականի փետրվարի 14-ից ի

[3] Միջհամայնքնային միավորումների ձևավորման և համայնքների խոշորացման հայեցակարգային մոտեցումներին հավանություն տալու մասին https://www.gov.am/2008/213.pdf, 05.06.2022թ.:

[4] Միջհամայնքնային միավորումների ձևավորման և համայնքների խոշորացման հայեցակարգային մոտեցումներին հավանություն տալու մասին https://www.gov.am/files/meetings/2008/213.pdf, 05. 06. 2022թ. :

վեր իրականացվել է համայնքների միավորման 54 ծրագիր, ինչի արդյունքում 486 համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է 54 համայնք[5]:

Ի վերջո կառավարության նախաձեռնությամբ նոր փոփոխություններով 2021թ. Արագածոտն, Արմավիրի, Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում ձևավորվեցին 11 փնջեր՝ 186 համայնքների միավորմամբ, որոնց մի մասն արդեն խոշորացված համայնքներ էին:

Այժմ ՀՀ համայնքների խոշորացման գործընթացը գրեթե ավարտվել է: Ելնելով վերոնշալից նպատակահարմար ենք համարում Հյուսիսային Հայաստանի, մասնավորապես Թուրքիային և Վրաստանին սահմանակից խոշորացված համայնքների սոցիալ-ժողովրդագրական ուսումնասիրությունը:

Խոշորացված համայնքների սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի ուսումնասիրության գլխավոր խնդիրներց է պարզել և գնահատել համայնքների խոշորացումն ինչպիսի գործնական և կիրառական ազդեցություն են ունեցել ազգաբնակչության էթնոսոցիալական, ժողովրդագրական, միգրացիոն և տարաբնակեցման գործընթացների վրա: Խնդիր ենք դրել նաև ուսումնասիրել բնակչության սոցիալական կազմի, սեռատարիքային կառուցվածքի, զբաղվածության և բնակչության կյանքի որակի քանակական և որակական փոփոխությունները համայնքների խոշորացումից հետո ընկած ժամանակահատվածում:

1.2. Համայնքների ժողովրդագրական և սոցիալ - տնտեսական ցուցանիշների վերլուծություն

Հասարակական կյանքի անցումային շրջաններն ազդում են բնակչության թվի փոփոխության վրա: Հատկանշական է, որ Ամասիա և Թումանյան խոշորացված համայնքների ժողովրդագրական անցման փուլերը

[5] ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի նկարագիրը, https://mtad.am/pages/local-self-government-system

ժամանակագրորեն համընկնել են մեր հանրապետության հասարակական կյանքի անցումային շրջաններին: Անցման շրջափուլերը սահմանագծելիս առաջնորդվել ենք վարչատարածքային բաժանման շրջադարձային փոփոխությունով, որոնք որոշակիորեն ներազդել են համայնքների բնակչության ժողովրդագրական շարժընթացի վրա: Այդ առումով, XXդ. վերջի և XXIդ. սկզբին Թումանյան և Ամասիա խոշորացված համայնքերում պայմանական կարելի է առանձնացնել երեք անցումային շրջաններ: Առաջին շրջանը ներառում է 1988-2001թթ.(նոր վարչատարածքային բաժանման շրջան), երկրորդը՝ 2001-2015թթ.(մինչ համայնքների խոշորացման շրջան) և երրորդը՝ 2015թ. մինչ օրս (խոշորացումից հետո ընկած ժամանակահատված):

Ընդհանուր առմամբ բնակչության զարգացման օրինաչափությունները պայմանավորված են կենսաբանական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, հոգևոր, մշակութային և հոգեբանական գործոններով: Հայաստանի, այդ թվում Ամասիայի և Թումանյանի խոշորացված համայնքների ներկայիս տարածքում XXդ. ընթացքում ճակատագրական երեք շրջադարձային իրադարձություններ տեղի ունեցան, որոնք էապես փոխեցին համայնքների բնակչության ժողովրդագրական իրապայմանները: Աղյուսակ 1-ից երևում է, որ 2022թ. Ամասիա և Թումանյան տարածաշրջանները վարչական առումով բաժանվել են 5 համայնքների, որտեղ միավորվել են 60 բնակավայր, այդ թվում Ամասիայի խոշորացված համայնը ներառել է 26 գյուղական բնակավայր, իսկ Թումանյանը 9 բնակավայր, որից մեկը քաղաքային:

Աղյուսակ 1

Թումանյան և Ամասիա խոշորացված համայնքների թվի շարժընթացը 1996-2022թթ.

Համայնքներ և բնակավայրեր	1996		2016		2022	
	Համայնքների թիվը	Բնակավայրերի թիվը	Համայնք թիվը	Բնակավայրերի թիվը	Համայնքների թիվը	Բնակավայրերի թիվը
Թումանյանի	36	38	33	34	4	34

տ/շ						
Ամասիայի տ/շ	19	26	2	26	1	26
Թումանյան խ/հ	-	-	1	7	1	9
Ամասիայի խ/հ	-	-	1	9	1	26

Թումանյան խոշորացված համայնքի համանուն քաղաքն է, իսկ Ամասիայինը համանուն գյուղական բնակավայրը, որի կարգավիճակը կարծում ենք պետք է փոխել և ճիտը քաղաքային բնակավայրի կարգավիճակ տալն է, որը ունի առաջին հերթին տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման և անվտանգության ապահովման ռազմավարական նշանակություն։

Աղյուսակ 2-ից երևում է, որ Ամասիայի խոշորացված համայնքի հողային ֆոնդի 68,8%-ը և Թումանյանի՝ 49,5%-ը գյուղատնտեսական նշանակության են։ Երկու խոշորացված համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողային ֆոնդի մեծ մասն արոտավայրերը և հողահանդակներն են, ինչը նախադրայլներ է ստեղծում անասնապահության զարգացման համար։ Ամասիա խոշորացված համայնքի ցուցանիշը բավականին բարձր է։ Սակայն ունենալով գյուղատնտեսական նշանակության բավականին մեծ տարածություն, խոշորացված համայնքները, ՀՀ նոսր բնակեցված տարածաշրջաններից են։ Դա բացատրվում է նախևառաջ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններով։ Երկու խոշորացված համայնքներն էլ ՀՀ –ում մասնագիտացված են անասնապահության, մասնավորապես խոշոր եղջերավոր անասնապահության մեջ։

Ըստ էթնոսոցիալական հարցումների պարզել ենք, որ խոշորացված համայնքների գյուղացիների մեծ մասը չի զբաղվում երկրագործական աշխատանքներով։ Չզբաղվելու հիմնական պատճառը, հողերի ոռոգման սուր հիմնախնդիրն է։ Այսպես, Ամասիայի խոշորացված համայնքի Բյուրակն գյուղի բնակիչների մի մասը բողոքում են, որ խոշոր ֆերմերները իրենց դաշտերը ջրում են, արդյունքում փոքր հողատարածք ունեցող գյուղացիներին ոռոգման ջուր

գրեթե չի մնում: Նույնն է պատկերը Ողջի գյուղում: Հարցվածների կարծիքով համայնքների խոշորացումը որևէ դրական ազդեցություն չի ունեցել ոռոգման ջրի խնդիրը կարգավորելու առումով: Թումանյանի խոշորացված համայնքի Դսեղ և Չկալով գյուղերի բնակչության մեծ մասը երկրագործական աշխատանքներով չեն զբաղվում, պատճառաբանելով որ դաշտերի ոռոգման սուր խնդիր կա, բացի դրանից անասնապահությունից ստացված եկամուտը մի քանի անգամ գերազանցում է երկրագործականին, և ի վերջո երկրագործությունը չի ապահովում ընտանիքի կենսական ծախսերի մինիմումը[6]:

Աղյուսակ 2

Ամասիայի և Արփիի խոշորացված համայնքների բնակչության խտությունը 2020թ.

Խոշորացված համայնք	Զբաղեցրած տարածքը հա	Բնակչության խտությունը մարդ/կմ²	Գյուղատնտեսական նշանակության հողերը հա	Բնակչության խտությունն ըստ գյուղատնտեսական նշանակության հողային տարածքի մարդ/կմ²
Ամասիա	20468,30	21,0	18453,72	23,0
Արփի	38361,00	4,0	20863,33	7,0
Ընդամենը	**58829,30**	**12.5**	**39317,05**	**15.0**
Թումանյան	**38239,76**	**17,7**	**18914,67**	**35,6**
Ընդամենը	**97069,06**	**15,1**	**58231,72**	**25,3**

[6] Ա. Բոյաջյան, Ամասիա և Թումանյան խոշորացված համայնքների ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական գործընթացները, Դաշտային էթնոսոցիալական նյութեր (այսուհետ-ԴԷՆ), Սղագրություն 1, էջ 2-7, Գյումրի 2022թ.:

Աղյուսակ 3-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջին 33 տարիների ընթացքում Ամասիա և Թումանյան խոշորացված համայնքների բնակչության բացարձակ թիվը պակասել է երկու անգամ, այդ թվում Ամասիա խոշորացված համայնքում՝ 2,7 անգամ, իսկ Թումանյանի՝ 23,1%-ով։ Ամասիայի խոշորացված համայնքի բնակչության թվի շեշտակի նվազումը պայմանավորված է արցախյան հակամարտությունով։ Ամասիայի վարչական շրջանում, որի սահմանները համընկնում է նույնանուն խոշորացված համայնքի սահմաններին՝ 1988-1990թթ. բնակեցված էր հիմնականում թուրքալեզու ժողովուրդներով։ Հայաբնակ ԼՂԻՄ-ի (Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, գտնվել է Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ) հարցով Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների լարվածության պատճառով, Ամասիայի թուրքալեզու ժողովուրդներն արտագաղթեցին Ադրբեջան, իսկ հետագայում նրանց զգալի մասը մեկնեցին բնակության Թուրքիայի հանրապետության արևելյան շրջաններ՝ Իգդիր և Կարս քաղաքներ։

Ամասիայի խոշորացված համայնքի ներկայիս տարածքում 1996-2021թթ. բնակչության թիվը նվազել է 37,5%-ով, իսկ Թումանյանի խոշորացված համայնքում՝ 28,6%-ով։ Սակայն, ներկայացվող ժամանակահատվածում Թումանյանի խոշորացված համայնքի բնակչության տեսակարար կշիռը համանուն տարածաշրջանի բնակչության թվաքանակում էական փոփոխության չի ենթարկվել[7]։ Մինչև խոշորացումը(1996-2015թթ.) Թումանյանի խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում գրանցվել է բնակչության թվի անկում։ Այդ տարիներին խոշորացված համայնքի բնակչության թիվը նվազել է 1251 մարդով կամ տարեկան միջինը՝ 1,1%-ով, իսկ 2015-2021թթ. համապատասխանաբար՝ 402-ով կամ տարեկան միջինը՝ 1,5%-ով։ Այսինքն, խոշորացումից հոտո ընկած ժամանակահատվածում բնակչության նվազման համաթիվը գերազանցում է մինչև խոշորացման ժամանակահտվածի համաթվին։ Այն հարցին, թե խոշորացումով է պայմանավորված բնակչության հարաբերական թվի նվազման ցուցանիշի աճը դժվարանում ենք հիմնավոր պատասխանել, որովհետ հարցավծներից պարզել

[7] 1988թ. Թումանյանի տարածաշրջանի բնակչության ընդհանուր թվի 9,2%-ը բնակվել է համանուն խոշորացված համայնքում, նույն ցուցանիշը 2021թ. կազմել է 9,9%:

ենք, որ համայնքների խոշորացումը որևէ ազդեցություն չի ունեցել բնակչության թվի նվազման վրա:

Աղյուսակ 3[8]

Թումանյան և Ամասիա խոշորացված համայնքների բնակչության թվի շարժընթացը

1988-2021թթ.

Տարածաշրջաններ և խոշորացված համայնքներ	1988թ	1996թ	2001թ	2011թ	2015թ.	2017թ.	2019թ.	2020թ.	2021թ*.
Թումանյանի տ/շ	56048	60606	48982	40006	42679	43241	40948	40573	39687
Թումանյան խ/հ	5145	5780	5586	4493	4529	4677	4107	4069	4127
Ամասիայի տ/շ	19497	8558	7141	6306	7593	7384	5654	5630	5662
Ամասիա խ/հ	11494	6808	5175	4455	5501	5648	4288	4275	5662
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔ									
	1988թ	1996թ	2001թ	2011թ	2015թ.	2017թ.	2019թ.	2020թ.	2021թ*.
Ք.Թումանյան	2246	2400	1954	1710	1670	1866	1507	1484	1448
Ահնիձոր	175	297	332	218	183	195	182	182	194
Մարց	477	602	652	496	588	495	444	441	389
Քարինջ	589	735	747	643	640	634	639	613	612
Լորուտ	931	1030	1126	843	1010	1012	886	891	869
Շամուտ	299	313	334	257	230	230	220	235	227

[8] *Աղյուսակը կազմելիս օգտագործվել են.*Պոտոսյան Ա., ՀՀ գյուղական տարաբնակեցումը. Եր. 1999թ., էջ 181-199, https://www.armstat.am/file/doc/162.pdf , https://www.armstat.am/file/doc /99482548.pdf , https://www.armstat.am/am/?nid=781, https://www.armstat.am/file/doc/99516223.pdf ,

Աթան	322	385	396	281	208	202	205	200	202
Քոբեր կայարան	106	18	45	45	-	43	24	23	15
Չկալով	-	-	-	-	219	-	-	-	171
Դսեղ	-	-	-	-	2316	-	-	-	2 065
ԱՄԱՍԻԱՅԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔ									
Ամասիա խ/հ	11494	6808	5175	4455	5501	5648	4288	4276	4257
Ամասիա	3693	2982	1875	1532	2094	2137	1640	1656	1634
Արեգնադեմ	1448	422	407	388	535	442	423	429	439
Բանդիվան	245	252	269	259	263	283	228	221	217
Բյուրակն	2555	884	781	739	671	614	631	634	635
Հովտուն	180	228	190	154	211	194	150	155	154
Մեղրաշատ	276	403	371	325	539	561	365	363	357
Ջրաձոր	305	371	302	237	329	329	253	247	240
Գտաշեն	925	398	370	271	284	482	203	203	207
Կամխուտ	314	32	8	2	-	11	11	11	11
Ողջի	1553	836	602	548	575	595	384	357	363
Նախկին Արփի խոշորացված համայնք	7738	1268	1452	1361	1804	1736	1366	1354	1405
Բերդաշեն	761	278	218	203	315	234	164	164	217
Պաղակն	292	45	39	83		69	61	100	87
Արդենիս	675	121	132	135	213	203	212	205	174
Աղվորիկ	837	55	90	89	128	146	75	72	117
Ալվար	513	140	147	140	246	239	144	112	129
Արավետ	488	-	-	-		-	-	-	-
Գառնառիճ	952	210	260	210	269	209	189	184	214
Եղնաջուր	495	-	28	27		21	26	30	32
Ծաղկուտ	923	138	209	181	255	222	146	127	142

Լորասար	288	-	-	-		-	-	-	-
Զորակերտ	431	130	150	145	168	185	171	174	128
Դարիկ	190	7	12	11		9	14	14	12
Զարիշատ	196	55	82	49	68	66	76	86	77
Երիզակ	414	-	0	0		-	-	-	-
Շաղիկ	283	89	85	88	142	133	88	86	76

Նույն ժամանակահատվածներում Ամասիայի խոշորացված համայնքի բնակչության թվի շարժընթացն ունի հետևյալ պատկերը։ Ամասիա խոշորացված համայնքում 1996-2015թթ. ընկած ժամանակահատվածում բնակչության թիվը պակասել է 1307 մարդով կամ տարեկան միջինը բնակչության թիվը նվազել է 1,0%-ով, իսկ Արփի խոշորացված համայնքում՝ ընհակառակը գրանցվել է բնակչության թվի ավելացում, այն կազմել է 536 մարդ կամ տարեկան միջին աճը եղել է 2,2%։ Այդ երկու խոշորացված համայնքներում[9] 2015-2021թթ. գրանցվել է բնակչության թվի որոշակի նվազում։ Ամասիա համայնքում խոշորացումից հետո բնակչության թիվը պակասել է 1244-ով կամ տարեկան միջինը 3,8%-ով, իսկ Արփի համայնքում 399 մարդով կամ տարեկան միջինը՝ 3,7%-ով։

Աղյուսակ 4

Բնակչության թվի նվազման հարաբերական ցուցանիշները ըստ գյուղական բնակավայրերի

Բնակչության թվի նվազումը %	Բնակավայրերի թիվը խոշորացված համայնքներում			ընդամենը
	Թումանյան	Ամասիա	Արփի	
Մինչև 10	4	2	5	11
11-20	3	2	4	9
21-30	2	4	3	9

[9] 2021թ. Արփի և Ամասիա խոշորացված համայնքները միավորվեցին և կազմեցին մեկ խոշորացված համայնք:

31 և բարձր	1	2	3	6

Թումանյանի խոշորացված համայնքում 2015-2021թթ. բնակչության թվի աճ գրանցվել է միայն Ահնիձոր գյուղում, իսկ Աթանի բնակչության թիվը չի փոխվել: Նույն ժամանակահատվածում Ամասիա խոշորացված համայնքում՝ միայն Բյուրակն գյուղում, Արփի համայնքում՝ Զարիշատում: Աղյուսակ 4-ից երևում է, որ խոշորացված համայնքներում բնակչության թվի նվազում մինչև 31 և բարձր տոկոս գրանցվել է 6 բնակավայրերում: Արփի խոշորացված հմայնքում այդ գյուղերն են՝ Շաղիկը(-49,6%), Ծաղկուտը(-44,3%) և Ալվարը(-47.6): Թվարկված գյուղերը նախկինում թուրքաբնակ են եղել: Հայ-ադրբեջանական հակամարտությունով պայմանավորված թուրքալեզու ժողովուրդներն արտագաղթել են, իսկ նրանց տեղը 1990-ական թվականներին տեղափոխվել են բնակության Զավախքի հայերը՝ հիմնականում, Սամսար, Սաթխա և Փոկա: Ալվար գյուղում մեր կողմից անցկացված էթնոսոցիալական հարցումներից պարզել ենք, որ այդ գյուղերից բնակչության մեծ ծավալի արտագաղթը պայմանավորված է նրանով, որ տղամարդկանց մի զգալի մասը երկար տարիներ դեպի ՌԴ մեկնելով սեզոնային արտագնա աշխատանքի, ի վերջո մշտական բնակություն են հաստատում և տեղափոխում են իրենց ընտանիքներին: Այսպես, այժմ 34 տնային տնտեսություններից 15-ում մարդ չի բնակվում[10]: Բացի դրանից Արմավիրի մարզից ժամանակավոր բնակվողներ կան, որոնք ամռանն իրենց անասուններն են արածեցնում, իսկ աշնան վերջին մեկնում են իրենց հիմնական բնակության վայր[11]: Նույնն է պատկերը նաև Ծաղկուտ և Շաղիկ գյուղերում, որոնք գտնվում են Արփի լիճ-ջրամբարի ափին: Թումանյանի խոշորացված համայնքում 2015-2021թթ. ամենաշատ նվազել է Մարց գյուղի բնակչության թիվը՝ շուրջ 33,8%:

[10] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ(Դաշտային էթնոսոցիալական նյութեր), սղագրություն 2, էջ 14, Գյումրի 2022թ.:

[11] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ(Դաշտային էթնոսոցիալական նյութեր), սղագրություն 2, էջ 14, Գյումրի 2022թ.:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում փոփոխության է ենթարկվել նաև գյուղական բնակավայրի մեծությունը (տես աղյուսակ 5)։ Բոլոր համայնքներում խոշոր և խոշորգույն գյուղական բնակավայրեր չկան։ Թումանյանի խոշորացված համայնքում մինչև խոշորացումն փոքր գյուղական բնակավայրերի թիվն ավելացել է մեկով, խոշորացումից հետո ևս ավելացել է մեկով, իսկ միջին մեծության բնակավայրերի թիվը պակասել է մեկով, որը խոշորացման հետ կապ չունի։ Մեծ գյուղական բնակավայրերի թիվը պակասել է մեկով։ Համայնքների խոշորացումից հետո, ըստ մեծության գյուղական բնակավայրերի կարգավիճակի որոշակի փոփոխություն չի գրանցվել։ Սակայն, նշենք որ Ամասիա խոշորացված համայնքում ավելացել է միջին մեծության և պակասել մեծ բնակավայրերի թիվը, իսկ Արփի համայնքներում ավելացել է փոքր և պակասել միջին մեծության բնակավայրերի թիվը։ Ի վերջո ներկայացվող խոշորացված համայնքներում 2015-2021թթ. գրանցվել է բնակավայրերի մեծության փոքրացում։ Դրանով պայմանավորված, կարելի է արձանագրել, որ համայնքերի խոշորացումը որևէ դրական ազդեցություն չի ունեցել բնակավայրերի մեծացման վրա։

Աղյուսակ 5

Խոշորացված համայնքների բնակչությունն ըստ մեծության

Գյուղական բնակավայրի մեծությունն[12]	մարդ	Թումանյան	Ամասիա	Արփի	Թումանյան	Ամասիա	Արփի	Թումանյան	Ամասիա	Արփի
		1996թ.			2015թ.			2021թ.		
փոքր	50-200	1	1	13	1	1	10	3	2	13
միջին	201-1000	6	8	2	6	8	5	5	7	2

[12] Խաշարացված համայնքների բնակչության թվի շարժընթացը, https://www.arlis.am/docid=93481

Մեծ	1001-3000	3	1	-	3	1	-	2	1	-
Խոշոր	3001-5000	-	-	-	-	-	-	-	-	-
Խոշորագույն	5001 և ավելի	-	-		-	-	-	-	-	-

Համայնքների մարդաշատությունը նույնպես փոփոխության է ենթարկվել։ Այսպես, Թումանյանի խոշորացված համայնքի մարդաշատությունը 1996թ. կազմել է 578 մարդ, 2015թ.՝ 453 և 2021թ.՝ 413։ Նույն ցուցանիշներն Ամասիա խոշորացված համայնքում կազմել է համապատասխանաբար 681. 550 և 428 մարդ, իսկ Արփի համայնքում՝ 85, 120 և 94 մարդ։ Հետաքրքիրն այն է, որ Արփի խոշորացված, որը 2021թ. միացվել է Ամասիա խոշորացված համայնքին, մարդաշատության կտրուկ անկում խոշորացումից հետո, իսկ մինչ խոշորացումն ավելացել է։

Թումանյանի խոշորացված համայնքի բնակչության թվի աճը 2021-2022թթ. պայմանավորված է Դսեղ և Չկալով գյուղական բնակավայրերը միացումով, իսկ Ամասիայինը՝ Արփի խոշորացված համայնքի միացումով։ 2021-2022թ. Ամասիա խոշորացված համայնքի բնակչության թվի շեշտակի աճը պայմանավորված է Արփի համայնքի միավորումը Ամասիա խոշորացված համայնքին։

Գծապատկեր 1-ից երևում է, որ 1988-2001թթ. Թումանյան խոշորացված համայնքի բնակչության թիվը տարեկան միջինն աճել է 0,6%, 2001-2015թթ.՝ նվազել 0,4% և 2015-2021թթ.՝ -2,1%, իսկ Ամասիա խոշորացված համայքում համապատասխանաբար նույն ցուցանիշները եղել -4,2%, -1,4% և-3,8%։

Համայնքների խոշորացումից հետո գրանցվել է բնակչության թվի շեշտակի անկում։ Իսկ համայնքերի խոշորացման հայեցակարգի կարևոր սկզբունքներից մեկը ժողովրդագրական իրավիճակի բարելավումն էր և բնակչության թվի աճի ապահովումը։ Կարելի է փաստել, որ հայեցակարգի այս սկզբունքը չի պահպանվել։







Գծապատկեր 1

Թումանյան և Ամասիա խոշորացված համայնքերի բնակչության թվի շարժընթացը

Որևէ երկրի, վարչական շրջանի և բնակավայրի ժողովրդագրական իրավիճակը գնահատող կարևոր բնութագրիչ է սեռատարիքային կառուցվածքը[13]: Այդ առումով բնակչության թվի փոփոխության բաղադրիչներն են՝ սեռատարիքային կառուցվածքը, բնական վերարտադրությունը, ամուսնությունը, ամուսնալուծությունը և միգրացիան: Բնակչության սեռատարիքային բաշխվածության վերլուծությունը հնարավորություն է տալիս պատկերացում ունենալ բնակչության հեռանկարային թիվի փոփոխության, սեռատարիքային

[13] Բնակչության սեռա-տարիքային կազմը տղամարդկանց ու կանանց թվերի հարաբերակցությունն է, և տարիքային(հասակային) խմբերի բաշխումն է: Սովորաբար առանձնացվում են տարիքային երեք խմբեր՝ մինչև 15 տարեկան(մինչաշխատունակ տարիք) 15-64 տարեկան (աշխատունակ տարիք) եւ 65 և բարձր տարիք (ետաշխատունակ կամ կենսաթոշակային տարիք):

խմբերի հարաբերակցության, աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, նյութական ռեսուրսների սպառման ծավալի և կառուցվածքի մասին[14]: Բնակչության սեռատարիքային կառուցվածքի դասակարգման տիպերին և ծերացման գործընթացի գնահատմանն անդրադարձել են Գ. Սունդբերգը, Է. Ռոսսետը և այլոք[15]:

Թումանյան խոշորացված համայնքում 2001-2022թթ. բնակչության ընդհանուր թվաքանակում գրանցվել է տղամարդկանց տեսակարար կշռի աճ: Այսպես, 2001թ. տղամարդիկ կազմել են բնակչության ընդհանուր թվի 47.9, 2011թ.՝ 48,1 և 2022թ.՝ 49,0%-ը[16]: Ամասիայի խոշորացված համայնքում նույն ցուցանիշներն են համապատասխանաբար՝ 47.8, 46.3 և 46.0%: Այսինքն, նշված ժամանակահատվածում Թումանյան խոշորացված համայնքում բնակչության սեռատարիքային հարաբերակցությունում տղամարդկանց տեսակարար համաթվի աճ է գրանցվել, իսկ Ամասիայում՝ ընդհակառակը, տղամարդկանց տեսակարար համաթվի ցուցանիշը նվազել է: Այդ երևույթն նախևառաջ պայմանավորված է նրանով, որ Ամասիա խոշորացված համայնքից մեծ թիվ են կազմում սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողները: :



[14] Ավետիսյան Խ., Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Եր., 1987թ., ‹‹Գիտություն›› հրատ. 198էջ, էջ 45:
[15] Медков В. М,. Демография. М., Издательство: «Инфра-М» 2003,стр. 60-61:
[16] Թումանյան խոշորացված համայնքի բնակչության սեռատարիքային կառուցվածքը, https://www.armstat.am/file/doc/162.pdf, https://www.armstat.am/99482548.pdf, http://lori.mtad.am/ 38444.pdf, 05.09.2022թ.:

Գծապատկեր 2: Ամասիա համայնքի բնակչության սեռատարիքային կազմը

Ինչ վերաբերում է խոշորացված համայնքների բնակչության բնական աճին, որը բնակչության բնական շարժը բնութագրող հիմնականում ցուցանիշներից մեկը է, և որը որոշվում է 1 տարվա ընթացքում ծնունդների և մահվան դեպքերի թվաքանակների տարբերությամբ, 2018 թվականից ի վեր այն ունի նվազման միտում, միայն 2020 թվականից հետո է նկատվում որոշակի կայունություն: Գծապատկեր 3-ից երևում է, որ Ամասիա խոշորացված համայնքում մինչև 2019 թվականը ծնունդների թիվը գերազանցել է մահերի թվին. սա բավականին լավ ցուցանիշ է, քանզի Ամասիա համայնքի բնակչությունը ծերացման վտանգից որոշակիորեն պաշտպանված էր, սակայն արդեն 2019-2021 թվականներին նկատվում է հակառակ միտում՝ մահերի թիվը գերազանցում է ծնունդների թվին: Այս երևույթի վրա որոշակի ազդեցություն ունեցավ COVID-19 համավարակի պատճառով մահացածների աճով: Նունն է պատկերը Թումանյանի խոշորացված համայնքում:



Գծապատկեր 3. Ամասիա համայնքի բնակչության բնական աճը

Ամասիա խոշորացված համայնքում իրականացված էթնոսոցիալական հարցումներից պարզել ենք, որ մահացածների թիվը գերազանցում է ծնվածների

թվին[17]: Սակայն, մի քանի գյուղական բնակավայրերում ծնվածների և մահացածների թիվը հավասար է, կամ ծնվածները գերազանցում են մահացածների թվին[18]: Թումանյանի խոշորացված համայնքի Դսեղ գյուղում 2020թ. մահացածները գերազանցել են ծնվածների թվին: Դա պայմանավորված 2020թ. COVID-19 համավարակից մահացածներով: Բնակչության ծնելիության անկում գրանցվել է նաև Թումանյան քաղաքում: Թումանյանի խոշորացված համայնքում 2018թ. գրանցված ծնունդների թիվը 40 երեխա է, իսկ մահացածներինը 52[19]: Ամասիա խոշորացված համայնքում 1990թ. համեմատությամբ 2020թ. ծնելիությունն նվազել է 6.3 անգամ, Արփիում՝ 6.3 անգամ և Թումանյանի՝ 7,5 անգամ: Մահացությունն աճել է համապատա 2.5, 3.2 և 3.5 անգամ: Բնական աճի ցուցանիշը երեք համայնքներում նվազել է 10 անգամից ավելի: Խիստ մտահոգիչ են վերջին հինգ տարիների ընթացքում բնակչության բնական աճի խիստ նվազման միտումները, որոնք կապված են ոչ միայն միգրացիայի և ծնելիության նվազման, այլ նաև համայնքների միավորման բացասական ազդեցության հետ, չնայած այս պնդումը լրացուցիչ ուսումնասիրության և ճշգրտման կարիք ունի:

Հարցվածները գտնում են, որ բնակչության թվի նվազումը պայմանավորված է ամուսնական տարիքի երիտասարդների արտագաղթով՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնություն, հանրապետության մայրաքաղաք Երևան և Վանաձոր քաղաք: Իսկ երիտասարդների արտագաղթի հիմնական պատճառներից մեկն այն է, որ համայնքներում բացակայում է այն սոցիալ-տնտեսական միջավայրը, որը ամուսնական տարիքի բնակչության մեծ մասին կկապի համայնքի հետ: Բացի դրանից, երիտասարդների մեծ մասը, հատկապես բարձրագույն կրթություն ունեցողները ցանկություն չունեն զբաղվելու գյուղատնտեսական աշխատանքներով, մասնավորապես անասնապահությամբ, ինչը ի տարբերություն երկրագործության ավելի քիչ աշխատատար է: Այսպես, Ամասիայի խոշորացված համայնքի նախարապահները գյումրեցի երկու եղբայրներ

[17] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 1, էջ 3, Գյումրի 2022թ.:
[18] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 4, էջ 2, Գյումրի 2022թ.:
[19] Բնակչության սոցիալական կազմը, www. arm.stat. 38444.pdf , էջ 7

են։ Նրա ասածով հինգ տարի է գյուղի հովիվն։ Քաղաքից գյուղ է եկել այն պատճառով, որ Գյումրիում աշխատանք չի ունեցել։ Որպեսզի ուրիշից դրամ չուզի, ստիպված եղբայրերով եկել են Ալվար հովվություն են անում[20]։

Թումանյանի խոշորացված բնակիչների մեծ մասը կարոտով են հիշում խորհրդային տարիները, երբ համայնքներում գործում էին փոքր արդյունաբերական ձեռնարկությունները։ Այսպես, Չկալով գյուղում խորհրդային տարիներին գործել է տանիքների կղմինդրների արտադրական ձեռնարկությունը։ Գյուղում կղմինդր արտադրելու համար օգտագործվել է տեղական հումքը։ Խորհրդային տարիներին Թումանյան քաղաքում գործել է հանրապետության միակ հրակայուն աղյուսի արտադրության գործարանը, որտեղ ըստ բնակչության տեղեկության աշխատել են երկու հազարից ավելի մարդ[21]։

Աղյուսակ 6-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ ներկայացվող ժամանակահատվածում խոշորացված համայնքներում գրանցվել է բնակչության ծերացման միտումներ։ Այդ առումով մինչև 17 տարեկանների տեսակարար համաթիվը 2001-2022թթ. ընկած ժամանակահատվածում Թումանյանի և Ամասիայի խոշորացված համայնքներում նվազել է մոտ անգամ, իսկ կենսաթոշակային տարիքի բնակչության համաթիվը Թումանյանի համայնքում աննշան աճ է գրանցել, իսկ Ամասիայում աճել է 1.7 անգամ։ Ըստ բնակչության ժողովրդագրական ծերացման ցուցանիշի՝ թիրախային տարածաշրջանի բոլոր համայնքները 2020թ. համարվում են ծերացող, բայց այդ առումով առավել խոցելի համայնքն է Թումանյանը, որտեղ 65-ից բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է 16.3% է։

Աղյուսակ 6

Բնակչության տարիքային կազմի շարժընթացը %

Խոշորացված	Մինչև 17	18-63 տարեկան	63 տարեկանից

[20] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 1, էջ 4, Գյումրի 2022թ.։
[21] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 7, էջ 9, Գյումրի 2022թ.։

համայնքներ	տարեկան		բարձր
Թումանյան 2001թ.	31.5	53.1	15.4
2011թ.	22.4	63.1	14.5
2020թ.	16.3	67.4	16.3
Ամասիա 2001թ.	34.5	58.0	7.5
2011թ.	25.7	64.8	9.5
2021թ.	17.8	69.5	12.7

1.3 Համայնքների սոցիալ-կրթական վիճակի վերլուծություն

Ներկայացնենք Ամասիա համայնքի բնակչության կրթական մակարդակը: Ինչպես երևում է գծապատկեր 4-ից, այն բազմազան է, և բնակչության մեջ մեծ մասնաբաժին են կազմում ոչ միայն բարձրագույն կրթություն ունեցող, այլ նաև ընդհանուր հիմնական և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցող անձինք: Իսկ 5-րդ գծապատկերում ներկայացված է Թումանյան համայնքի բնակչության կրթական մակարդակը :



Գծապատկեր 4. Ամասիա համայնքի ընդհանուր կրթական մակարդակը 2022թ. մայիս



Գծապատկեր 5. Թումանյան համայնքի ընդհանուր կրթական մակարդակը 2022թ. սեպտեմբեր

Կրթության խնդիրը բավականին լուրջ է խոշորացված համայնքների փոքր գյուղական բնակավայրերում: Այսպես, Ամասիա խոշորացված համայնքի Ալվար գյուղում երեխաների համար նպաստավոր պայմանները բացակայում են: Երբ երեխաները դառնում են դպրոցական տարիքի, ծնողները նրանց մի մասին ուղարկում են Գյումրի սովորելու: Հիշատակենք, որ այդ գյուղի բնակիչների մի մասը Գյումրիում մասը՝ հիմնականում ակտիվ աշխատունակ տարիքի տղամարդիկ(25-29 տարեկան) մեկնում են սեզոնային արտագնա աշխատանքի: Ամասիա համայնքում բնակիչների զբաղվածությանը, ապա ըստ վիճակագրական տվյալների՝ համայնքում ունեն բնակարաններ: Ըստ հարցվածների տեղեկության առաջինից յոթերորդ դասարանցիները իրար հետ են սովորում, ինչն անթույլատրելի է[22]: Այդպիսի պայմաններում հնարավոր չէ ապահովել որակյալ կրթություն , և պատկան մարմիններն այս խնդրին այնպիսի լուծում պետք է տան,

[22] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 1, էջ 5, Գյումրի 2022թ.:

որ երեխաները ստանան այնպիսի կրթություն ինչպիսին մեծ գյուղերում է:

Կրթությունից բացի, խոշորացված համայնքներում խնդիրը սուր բնույթ է կրում զբաղվածության ոլորտում: Գյուղացիների մի մասը զբաղված են գյուղատնտեսության ոլորտում, մյուս զգալի գյուղատնտեսությամբ զբաղվողների թվաքանակը գերազանցում է ոչ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվողների թվին: Ընդհանուր զբաղվածների թվի մեջ գյուղատնտեսությամբ զբաղվողների թիվը 2017 թվականին կազմել է 75,9%, իսկ 2021 թվականին գյուղատնտեսությամբ զբաղվողների թիվը նվազել է՝ կազմելով 65,8%: 2017 թվականին ոչ գյուղատնտեսությամբ զբաղվողների թիվը կազմել է 24,1%, և այս ցուցանիշն աճել է մինչև 2021 թվականը՝ կազմելով 34,2%: Այս ցուցանիշից կարող ենք փաստել, որ վերջին տարիներին նկատվում է գյուղատնտեսությամբ զբաղվողների տեսակարար կշռի նվազման միտում, 2021թվականին 2017 թվականի համեմատ այդ թիվը կրճատվել է 39,4%-ով, ինչը բավականին բարձր է ու բացասական միտումների մասին կարող է վկայել[23]: Տվյալ երևույթին զուգընթաց աղյուսակ 6-ից թվային տվյալներից երևում է, որ 2001-2020թթ. ընկած ժամանակահատվածում աշխատունակ տարիքի բնակչության (18-63 տարեկան) տեսակարար համաթվի ցուցանիշը երկու խոշորացված համայնքներում աճել է, ինչն ազդել է սեզոնային արտագնա աշխատանքների մեկնողների թվի ավելացմանը: Այսպես, Թումանյանի խոշորացված համայնքում աշխատունակ տարիքի բնակչության համաթվի մեծությունը 2001թ. կազմել է 53.1% , իսկ 2020թ.՝ 67.7%: Նույն ցուցանիշն Ամասիա խոշորացված համայնքում եղել է համապատասխանաբար 58.0 և 69.5%: Թումանյանի խոշորացված համայնքում 2016թ. աշխատունակ բնակչության ընդհանուր թվի 67,5%-ն է զաբաղված եղել, իսկ 2021թ.՝ 63,4%-ը, իսկ արտագնա աշխատանքի մեկնողների նույն ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 6.8 և 10,1[24]: Թումանյանի խոշորացված համայնքում բավականին բարձր է գործազրկության ցուցանիշը՝ 2016թ. պաշտոնական տվյալով այն կազմել 776 մարդ, կամ աշխատունակ բնակչության

[23] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 1, էջ 8, Գյումրի 2022թ.:
[24] Բնակչության զբաղվածությունը Շիրակի և Լոռու մարզերում, www.armstat.am :

ընդհանուր թվի 17.1%-ը։ Սակայն , հիշատակենք, որ գործազուրկների մեծ մասը սեզոնային արտագնա աշխատանքի է մեկնում։ Ըստ վիճակագրության խոշորացված համայնքի երկու տնային տնտեսությունից մեկում առկա է սեզոնային արտագնա աշխատանքի մեկնող։

Ամասիայի խոշորացված համայնքի Ալվար գյուղի աշխատունակ տարիքի բնակչության մի մասի(հիմնականում կանայք) զբաղված են գյուղատնտեսական աշխատանքերով՝ մասնավորապես անասնապահությամբ, իսկ աշխատունակ տարիքի տղամարդկան մեծ մասը մեկնում են ՌԴ սեզոնային արտագնա աշխատանքի։ Սեզոնային արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառը՝ գյուղատնտեսական աշխատանքից ստացված չնչին եակմուտն է, ինչը չի ապահովում կենսական մինիմումը։ Գյուղացիները բողոքում են, որ իրենք կաթի 1լ հանձնում կամ վաճառում են 180-190 դրամ, իսկ քաղաքի խանութներում այն վաճառվում է 350-450 դրամով։ Նույնն է պատկերը խոշորացված համայնքների գյուղական մյուս բնակավայրերում։ Ըստ գյուղացիների այդպիսի իրավիճակը լուրջ վնաս է հասցնում անասնապահության զարգացմանը։ Այսպես, մեկ կիլոգրամ տացվարի միսը գյուղացին դասաբին վաճառում է 2000 դրամով, իսկ այն քաղաքում վաճառվում է 3500-4000դրամով։ Մեկ խոշոր եղջերավոր անասունն արածացնելու համար գյուղացին նախրապահին 10 հազար դրամ է վճարում, ինչն ըստ գյուղացիների բավականին մեծ գումար է կազմում[25]։

Ամասիա գյուղի բնակիչները բնակչության արտագաղթը կապում են աշխատատեղերի բացակայությունով։ Հարցումներից պարզել ենք, որ արտագնա աշխատանքի մեկնողների մեծ մասի վաստակած գումարների մի մասը գյուղատնտեսական վարկերն են մարում։ Հիշատակենք, որ նույնն է պատկերը խոշորացված համայնքների մյուս գյուղական բնակավայրերում։ Վիճակն էլ ավելի բարդացել այն պատճառով, որ նախորդ տարի անբարենպաստության պատճառով անասնագլխաքանակը կիսով չափ պակասել է։ Հատկապես սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների թիվը մեծ է Ամասիայի խոշորացված համայնքի Արդենիս գյուղում, որի բնակիչների զգալի մասը 1980-ական թվականների վերջին

[25] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 1, էջ 5, Գյումրի 2022թ.:

և 1990-ական թվականների սկզբին եկել են Ջավախքի Գանձա գյուղից։ Հարցումներից պարզեցինք, որ երիտասարդների մեծ մասը, գյուղի աղետալի սոցիալ-տնտեսական վիճակում հայտնելու պատճառով, պատրաստվում են արտագաղթել ՌԴ։ Աղետալի վիճակը նրանք կապում են համայնքի խոշորացման և ՏԻՄ ընտրությունների հետ[26]։ Նման իրավիճակը հանգեցրել է խոշորացված համայնքի բնակչության աղքատցման խորացմանը։ Ընդհանուր առմամբ, 2022թ-ի մինչ այժմ հրապարակած տվյալների համաձայն, համայնքում առկա են ընտանեկան նպաստ ստացող 172 տնային տնտեսություն, այսինքն ընդհանուր տնային տնտեսությունների մոտ 5%-ը, 251 կենսաթոշակառու և 147 հաշմանդամություն ունեցող անձ[27] Իրավիճակն այլ է Ամասիա խոշորացված համայնքի Բանդիվան գյուղում, որտեղ գործող կաթնամթերքի գործարանը մեղմել է արտագաղթի ծավալը։ Գործարանում աշխատում են 25 մարդ, որտեղ աշխատում են ոչ միայն բանդիվանցիներ, այլև Ցողամարգից և Ամասիայից[28]։ Գյուղի բնակիչները կաթի իրացման հարցում խնդիր չունեն, սակայն բողոքում են տավարի մսի վաճառքի գնից՝ դասաբի իրենցից միսը գնում է 2000 դրամով և վաճառում են շուկայուն 3500-4000դրամով, այսինքն իրենք ավելի քիչ գումար են վաստակում, քան մսավաճառը։

Սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների թիվը շատ է նաև Բերդաշեն գյուղում, որը նախկինում եղել է Արփի խոշորացված համայնքի կենտրոնը։ Հարցումներից պարզեցինք, որ գյուղի աշխատունակ տարիքի բնակչության 40%-ը մեկնում է ՌԴ սեզոնային արտագնա աշխատանքի։ Գյուղական բնակչության եկամտի հիմնական աղբյուրը գոյանում է տրանսֆերտներից, տեղում արտադրված գյուղմթերքը հազիվ բավականացնում կենսական մինիմիում ծախսերը։ Այսինքն, եթե դրսից խոպանչիները գումար չուղարկեն, գյուղը գրեթե ամբողջությամբ կդատարկվի[29]։

---

[26] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 3, էջ 2, Գյումրի 2022թ.:

[27] Ամասիա համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիր, :

[28] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 4, էջ էջ 3, Գյումրի 2022թ.:

[29] Ղ. Հարությունյան, Ա.Բոյաջյան, Ն. Վարդանյան, Ամասիա խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական դրությունը, ԴԷՆ, սղագրություն 5, էջ էջ 3, Գյումրի 2022թ.:

ԳԼՈՒԽ 2. ԱՄԱՍԻԱ և ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1. Համայնքների բյուջեի ծախսային և եկամտային ցուցանիշների վերլուծություն

Ուսումնասիրենք Ամասիա և Թումանյան համայնքների բյուջեի պլանային և փաստացի եկամտային ընդհանուր ցուցանիշների դինամիկան 2017-2022 թթ. ընթացքում:



Գծապատկեր 6 Ամասիայի բյուջեի պլանային և փաստացի եկամտային ընդհանուր ցուցանիշների դինամիկան

Ինչպես երևում է գծապատկեր 6-ից Ամասիա համայնքում 2017 թվականին կատարվել է բյուջեի եկամտային բաժնի պլանայինի 75,09%-ը, 2018 թվականին՝

99,01%-ը, 2019 թվականին՝ 113,3%-ը, 2020 թվականին՝ 103,8%-ը, իսկ 2021-ին՝ 87,77%- ը: 2018 և 2019 թթ. արձանագրվել է կատարողականի բարձր աճ, սակայն ի տարբերություն նախորդ երկու տարիների՝ 2021-ի ընթացքում համայնքի բյուջեի եկամտային բաժինն արտացոլող ցուցանիշները թերի են կատարվել և դինամիկան նվազել է: Ինչ վերաբերում է 2022 թվականին, ապա ըստ վիճակագրական տվյալների մինչ սեպտեմբեր բյուջեի եկամտային հատվածի կատարողականը կազմել է 59,41 %[30]:



Գծապատկեր 7. Թումանյան համայնքի բյուջեի պլանային և փաստացի եկամտային ընդհանուր ցուցանիշների դինամիկան[31]

Գծապատկեր 7-ում ներկայացված է Լոռու մարզի Թումանյան համայնքի բյուջեի եկամտային ցուցանիշները և դրանց կատարողականն ըստ տարիների: Համաձայն տվյալների 2022 թվականի 3 եռամսյակների ընթացքում պլանային եկամտային ցուցանիշի կատարողականը կազմել է 44,6 %: Եթե համեմատենք Ամասիա

[30] https://amasia.am/Pages/NewBudget/in/Result.aspx
[31] https://tumanyancity.am/Pages/NewBudget/InPlan/List.aspx

համայնքի միևնույն ժամանակահատվածի կատարողականի հետ, ապա կարող ենք արձանագրել այս ցուցանիշը համեմատաբար ցածր է, քանի որ ընթացիկ տարին մինչև չորրորդ եռամսյակի սկսվելը եկամտային մասի կատարողականը մոտ է 50 %-ին։

2017 թվականից սկսած դիտարկելով Ամասիա համայնքի բյուջեի մուտքերը կարող ենք փաստել, որ 2017-ին է եղել ամենաքիչ եկամտային հոսքեր, որից հետո գնալով կայուն աճ է նկատվել, և միայն 2021 թվկանին է անկում գրանցել։ Ուսումնասիրելով առանձին առանձին եկամտի ֆոնդային և վարչական բաժինները, նշենք, որ բյուջեի ֆոնդային մասի եկամուտների հոսքի անկում գրանցվել է 2018 թվականին ՝ մոտ 98,2 %, որը հիմնականում պայմանավորված է եղել պաշտոնական դրամաշնորհների մակարդակի նվազմամբ։ 2021 թվականին բյուջեի ֆոնդային մասի եկամտուները կազմել են 5717,840 հազար դրամ, մինչդեռ 2020-ին այն եղել է 9410,870 հազար դրամ։ Ինչ վերաբերում է վարչական մասին, ապա այստեղ հակառակ պատկերն է, 2020-ի համեմատ որոշ չափով ցուցանիշը բարձրացել է՝ կազմելով 173651,892 հազար դրամ, մինչդեռ 2020 թվականին այն 171044,668 հազար դրամ էր, այսինքն այն աճել է մոտ 2%-ով։ Թումանյան համայնքում 2021-ին ֆոնդային մասի եկամուտները կազմել են 249,272 հազար դրամ, իսկ վարչականը ՝ 118503,627 հազար դրամ։ Այսինքն ստացվում է, որ ընթացիկ տարում Թումանյան համայնքի բյուջեի մուտքերը ունեցել են հետևյալ բաշխումը ՝ ֆոնդային հատված ՝ 45,12%, վարչական հատված՝ 44,53 %։

Այժմ ուսումնասիրենք բյուջեի ծախսային հատվածը և դիտարկենք համայնքների բյուջեների ծախսային ցուցանիշների դինամիկան ըստ տարիների ։

2017 թվականին Ամասիա համայնքում կատարվել է 149,913,607 դրամին համարժեք ծախս։ Իսկ 2018 թվականին բյուջեում ծախսերը 2017 թվականի համեմատությամբ նվազել են 3,8%-ով՝ կազմելով 144,132,729 դրամ, ինչը պայմանավորված է ընդհանուր բնույթի հանրային ծառայության, Ամասիայի համայնքապետարանի, բազմաբնակարան շենքերի կառուցման և վերանորոգման, ճանապարհային տրանսպորտի, գրադարանների, ջրամատակարարման ոլորտների վրա կատարվող ծախսերի բացակայությամբ։ 2019 թվականին

2018թվականի համեմատ բյուջեում ծախսերն ավելացել են 8,1%-ով (155,863,580 դրամ), այս աճը շարունակվել է նաև 2020 թվականին՝ կազմելով 159,688,651 դրամ (ավելացել է 10,7%-ով): 2021 թվականին ծախսերն էլ ավելի մեծ չափով եմ բարձրացել, 2020-ի համեմատ գրանցելով 18% աճ:



Գծապատկեր 8 . Ամասիա համայնքի բյուջեի պլանային և փաստացի ծախսային ցուցանիշների դինամիկան՝ 2017-2022թթ.



Գծապատկեր 9. Թումանյան համայնքի բյուջեի պլանային և փաստացի ծախսային ցուցանիշների դինամիկան՝ 2017-2022 թթ.[32]

Թումանյան համայնքում 2017 թվականին կախված խոշորացման գործընթացների հետ , տեղի է ունեցել բյուջեի ծախսային հատվածի թերակատարում (- 146,097,267 դրամ), այսինքն փաստացի ցուցանիշները պլանի նկատմամբ կազմել է 0.42 %, ինչը կարելի է ասել խոսում է համայնքների խոշորացման գործընթացի՝ սկզբնական շրջանում բացասական ազդեցության մասին: Անցում կատարելով հաջորդ տարիներին, ըստ տվյալների կարող ենք նշել, որ գնալով որոշ չափով գրանցվել է պլանի նկատմամբ կատարողականի աճ, ինչպես օրինակ 2018-ին 12,78%, 2019-ին՝ 22.98%, 2020-ին ՝ 34.72%: Աճի տեմպը տարեցտարի ավելացել է՝ 2021-ին գրանցվել է բավական բարձր արդյունք, երբ համայնքի ծախսային բաժնի փաստացին պլանի նկատմամբ կատարվել է 56.02%-ով: Իսկ ահա 2022 թվականի սեպտեմբերի դրությամբ ցուցանիշը կազմում է 20.21%: Ամասիա համայնքում նույն ժամանակահատվածի դրությամբ ցուցանիշը կազմում է 43.65%: Ցուցանիշները վկայում են, որ Թումանյան համայնքում բյուջետային գործընթացների, մասնավորապես դրանց կատարման առումով անհրաժեշտություն կա մինչ այս պահը իրականացված գործողությունների

[32] Աղբյուրը՝ https://tumanyancity.am/Pages/NewBudget/Out/result.aspx

փաթեթի խորը վերլուծության, առկա խնդիրների խորքային բացահայտման նպատակով:

Ամասիա համայնքում 2017 թվականին կատարվել է բյուջեի ծախսային մասի պլանայինի 87,3%-ը, 2018 թվականին՝ 73,8%-ը, 2019 թվականին՝ 78,07%-ը, 2020 թվականին՝ 74,68%-ը, իսկ 2021 թվականին՝ 76,55%-ը: Ստացվում է, որ համաձայն վիճակագրական տվյալների՝ բյուջեի ծախսային հատվածը այս համայնքում ունեցել է պլանի նկատմամբ տատանողական դինամիկա:



Գծ.ապատկեր 10. Ամասիա համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային ծախսերի դինամիկան՝ 2017-2021թթ.[33]

Գծապատկեր 11-ի տվյալների համաձայն՝ 2017 թվականից սկսած վարչական ծախսերը գերակշիռ դեր են ունեցել ընդհանուր ծախսերի մեջ, իսկ ֆոնդային ծախսերը ցածր մասնաբաժին են կազմել և, ըստ տարիների, ֆոնդային ծախսերի մասնաբաժինն ընդհանուր ծախսերի մեջ նվազել է, չնայած որ ընդհանուր բյուջետային ծախսերը գնալով ավելացել են: Եթե 2017 թվականին Ամասիա համայնքի բյուջեի վարչական ծախսերը կազմել են 113,689,221 դրամ, ապա 2021 թվականին ցուցանիշն ավելացել է՝ դառնալով 167,241,240 դրամ, այսինքն 4

[33] Աղբյուրը՝ https://amasia.am/Pages/NewBudget/Out/result.aspx

տարիների ընթացքում վարչական ծախսերն ավելացել են մոտ 47%-ով։ Ֆոնդային ծախսերի նվազումն հիմնականում կապված է տարբեր հանգամանքներով։ Դրանից մեկն այն է, որ համայնքում արտաքին լուսավորությանը (շենքերի և շինությունների կառուցում, նյութեր և պարագաներ) հատկացվող գումարը 2020-2021թթ. շատ չնչին մասն է կազմել։ Ֆոնդային բյուջեից արտաքին լուսավորությանն ընդհանրապես գումար չի հատկացվել (հատկացումը եղել է վարչական մասով), ինչով էլ հիմնականում պայմանավորվում է ֆոնդային ծախսերի նվազումը։



Գծ.ապատկեր 11. Թումանյան համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային ծախսերի դինամիկան՝ 2017-2021թթ.

Գծապատկեր 11-ի տվյալների համաձայն՝ 2017 թվականից սկսած վարչական ծախսերը գերակշիռ դեր են ունեցել ընդհանուր ծախսերի մեջ, իսկ ֆոնդային ծախսերը ցածր մասնաբաժին են կազմել, չնայած որ ըստ տարիների, ֆոնդային ծախսերի մասնաբաժինն ընդհանուր ծախսերի մեջ էական ավելացել է։ Եթե 2017 թվականին Թումանյան համայնքի բյուջեի վարչական ծախսերը կազմել են 614,300

դրամ, ապա 2021 թվականին ցուցանիշն ավելացել է՝ դառնալով 105,504,922 դրամ, այսինքն 4 տարիների ընթացքում վարչական ծախսերն ավելացել են մոտ 71%-ով։ Այնուամենայնիվ դիտարկելով վերոնշյալ վիճակագրական տվյալներից միայն փաստացի տարեկան եկամտային և ծախսային ցուցանիշները, կարող ենք հանգել նրան, որ 2017 թվականից ի վեր ինչպես Ամասիա, այնպես էլ Թումանյան համայնքների բյուջեի եկամտային մասը բավականին աճել է։ Այստեղ էական նշանակություն է ունեցել այն հանգամանքը, որ համայնքը՝ լինելով խոշորացված, իր մեջ ներառում է մի շարք բնակավայրեր, որի արդյունքում յուրաքանչյուր բնակավայրում կատարողականին ուղղված աշխատանքները ազդել են խոշորացված համայնքների ցուցանիշների վրա։

Չնայած որ երկու համայնքներում էլ և՛ եկամուտները , և ՛ համայնքի խնդիրների լուծման և ծրագրերի իրականացման վրա կատարվող ծախսերը ավելացել են նախորդ տարիների համեմատ, սակայն վերոնշյալ վիճակագրական ցուցանիշների տատանումները ցույց են տալիս, որ դեռևս խոշորացման գործընթացի՝ համայնքների կյանքի որակի բարձրացմանն ուղղված նպատակը կայուն կերպով կյանքի չի կոչվել։ Անհրաժեշտություն կա նոր կապիտալ ծրագրերի և նախագծերի ներդրումը խոշորացված համայնքներում, որոնք թույլ կտան ավելի լավ օգտագործել համայնքի ներուժը և բարձրացնել գործողությունների արդյունավետության մակարդակը։

2.2. Ամասիա և Թումանյան համայնքների խոշորացման գործընթացի մշտադիտարկում քանակական մեթոդաբանության կիրառմամբ

ՀՀ-ում տեղի ունեցած վարչատարածքային բարեփոխումների արդյունքները համալիր կերպով գնահատել և վերլուծել բավական բարդ է, քանի որ իրականացվող փոփոխությունները հնարավոր չէ բացարձակ առումով համարել դրական կամ բացասական։ Խոշորացման գործընթացը որոշ առումներով տվել է իր դրական արդյունքը, մյուս գործոնների առումով բացասական, որը

հիմնականում կախված է տվյալ համայնքին կամ տարածքին հատուկ սոցիալ-տնտեսական և մի շարք այլ գործոններով։

Այս առումով հետազոտության շրջանակներում իրականացվել է խոշորացման գործընթացի արդյունքային վերլուծություն՝ մշտադիտարկման քանակական մեթոդաբանության կիրառմամբ՝ Ամասիա և Թումանյան խոշորացված համայնքներում բնակչության շրջանում սոցիալական հարցումների իրականացմամբ։

Հետազոտության ընթացքում վերլուծության համար հիմք են հանդիսացել համայնքներում իրականացված սոցիոլոգիական հարցումները, որոնք պատկերացում են տալիս համայնքում սոցիալ-տնտեսական առկա իրավիճակի մասին։ Հարկ է նշել մի կարևոր հանգամանք. հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ և՛ Ամասիա, և՛ Թումանյան խոշորացված համայնքներում, խոշորացումից հետո համայնքների կազմում գտնվող բնակավայրերի (նախկին համայնքներին) վերաբերող նախորդ տարիների տվյալները առկա չեն կամ չեն պահպանվել ըստ արժանվույն։

Համայնքներում իրականացված սոցիոլոգիական հարցումները հնարավորություն են տվել պարզել արդյոք առկա իրավիճակը գոհացուցիչ է համայնքի բնակիչների համար թե ոչ։ Արդյունքում բացահայտվել են մի շարք թերություններ, ոլորտներ, որոնք ունեն մի շարք բացեր հանրության աչքում և կարիք կա մասշտաբային փոփոխությունների՝ բնակչության շրջանում վստահություն ձեռք բերելու, և գլխավորը, համայնքի կազմում առկա բնակավայրերի համաչափ և կայուն զարգացումը ապահովելու համար։ Այլ կերպ ասած ՀԶԾ-ների և համայնքի բյուջեների մշակման տեսանկյունից կարևոր է հասկանալ համայնքային հիմնախնդիրների առաջնահերթությունը, որը հնարավոր է դուրս բերել բնակիչների շրջանում քանակական դեմ առ դեմ հարցումների կամ խմբային քննարկումների արդյունքում։

Սոցիալական հարցումները Ամասիա համայնքում ընդգրկել են ամբողջ բնակչության մոտ 5,4%-ը, իսկ Թումանյան համայնքում՝ 5,7%-ը։

Իրականացված հարցման ընթացքում պարզվել է, թե համաձայն քաղաքացիների, որոնք են համայնքի առջև ծառացած հիմնական և ամենակարևոր հիմնախնդիրները: Հարցը տրվել է որպես բազմակի պատասխաններ ենթադրող հարց, այսինքն, քաղաքացիները հնարավորություն են ունեցել նշել մի մի քանի ոլորտներ:

Այս հարցի արդյունքում բացահայտվել է, որ Ամասիա համայնքի առաջնային հիմնախնդիրների ցանկում է աղբահանության խնդիրը, որը որպես հիմնախնդիր նշել են հարցվածների 23,2%-ը: Իսկ Թումանյան համայնքում առաջնային պատասխանը եղել է գործազրկությունը, որը նշվել է ընդհանուր հարցվածների 21,9 %-ը: Բացի այս երկու հիմնախնդրից, հարցվողների կողմից նշվել են նաև որպես հիմնախնդիր տրանսպորտը, ճանապարհների բարեկարգումը, լուսավորությունը և այլն: Ամբողջական ցանկը ներկայացված է աղյուսակ 7-ում: Խնդիրը կայանում է նրանում, որ ներքոնշյալ հիմնախնդիրները համայնքների առջև ծառացած են եղել նախքան խոշորացման գործընթացը, մինչդեռ այդ գործընթացները պետք է խթան հանդիսանային առկա խնդիրների մեծ մասի վերացմանը:

Աղյուսակ 7.

Որո՞նք են համայնքի առջև ծառացած հիմնական և ամենակարևոր հիմնախնդիրները

N	Ոլորտ	%-ը պատասխաններից *Ամասիա համայնք*	%-ը պատասխաններից *Թումանյան համայնք*
1.	Գործազրկություն	16.8%	21,9%
2.	Աղբահանություն	23.2%	14.5%
3.	Ճանապարհների	12.1%	9.9%

	բարեկարգում		
4.	Լուսավորություն	5.8%	6.8%
5.	Կրթություն	7.2%	3.7%
6.	Արտագաղթ	11.6%	17.6%
7.	Շրջակա միջավայրի պահպանություն	3.1%	2.8%
8.	Սոցիալական խնդիրներ	7.9%	11.7%
9.	Երիտասարդների զբաղվածության ապահովում/ մշակույթ	4.7%	6.6%
10.	Տրանսպորտ	5.2%	3.8%
11.	Այլ	2.4 %	0.7

Հետազոտության ընթացքում հարցվողներին հարց է ուղղվել, թե վերջիններս որքանով են բավարարված համայնքապետարանի կողմից իրականացվող աշխատանքներից: Գնահատումն իրականացվել է 1-ից 4 բալանոց սանդղակով, որտեղ 1-ն նշանակում է «ընդհանրապես բավարարված չեմ»՛, 2-ը՝ «ավելի շուտ բավարարված չեմ», 3-ը՝ «ավելի շուտ բավարարված եմ» և 4-ը՝ «լիովին բավարարված եմ»: Այսպիսով, համայնքապետարանի աշխատանքների բավարարված բնակչության մասնաբաժինը ըստ հարցման արդյունքների Ամասիա համայնքում կազմել է 33,8% , իսկ Թումանյան համայնքում՝ 29,9%: Խոսքը վերաբերում է հատկապես Ամասիա և Թումանյան համայնքների կազմում

առկա փոքր բնակավայրերին, որոնք անգամ որպես ներկայացուցիչ չունեն ավագանու անդամ, անտեսված են մի շարք հարցերում և իրենց խնդիրները տարիներ շարունակ մնում են անլուծելի:

Հաջորդիվ հարցվողները պատասխանել են հետևյալ հարցին, թե ինչպես է փոխվել իրենց տնային տնտեսության սոցիալ-տնտեսական վիճակը խոշորացումից հետո: Ամասիա համայնքում հարցվողների 36 %-ը նշել է, որ սոցիալ-տնտեսական վիճակը գնալով վատթարացել է, իսկ 48%-ը նշել է, որ նույնն է մնացել և ընդամենը 11,4%-ն է նշել, որ տնային տնտեսության վիճակը բարելավել է: Թումանյան համայնքում պատկերը հետևյալն է. ընդհանուր հարցվողների 41,2% -ը նշել է, որ վիճակը վատթարացել է, իսկ 7,6%-ը նշել են, որ բարելավել է տնային տնտեսության սոցիալ-տնտեսական վիճակը: Ընդհանուր տվյալները ներկայացված են գծապատկեր 10-ում:



Գծապատկեր 12. Սոցիալ-տնտեսական վիճակի բնութագրումը

Խոշորացման գործընթացների իրականացման արդյունքում ըստ էության յուրաքանչյուր բնակավայր, որը կազմում է տվյալ համայնքի մասը, պետք է

մասնակցություն ունենա տվյալ համայնքի զարգացման ծրագրերի մշակման և կազման, համայնքների խնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների որոնման հարցում: Ինչպես նշվեց, մի շարք բնակավայրեր, որպես այդպիսին, չունեն իրենց բնակավայրը խոշորացված համայնքի ՏԻՄ-երում ներկայացնող անձ (ավագանու անդամ): Այս առումով բնակիչների հետ դեմ առ դեմ հարցման ընթացքում ուղղվել են հարցեր նաև խոշորացված համայնքների զարգացման ծրագրերի, դրանց վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության և դրանցում նրանց ընդգրկվածության աստիճանի վերաբերյալ, քանի որ վարչատարածքային բարեփոխումները իրականացվել են նաև այն նպատակով, որպեսզի հանրությունը տեղեկացված լինի համայնքում կատարվելիք բոլոր գործընթացներից և ունենա իր ակտիվ մասնակցությունը:

Համաձայն հարցման արդյունքների, համայնքների բնակչության մեծ մասը լիարժեք տեղեկատվություն չունի, թե ինչ է իրենից ներկայացնում համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կամ տարեկան աշխատանքային պլանը: Այսինքն ՀԶԾ-ների ու համայնքի բյուջեների վերաբերյալ իրազեկվածությունը բավական ցածր է երկու համայնքներում էլ: Հարցվածների գերակշիռ մասն ընդհանրապես ծանոթ չէ պլանին (Ամասիա համայնք՝58,8%, Թումանյան համայնք՝ 62,6%): Լիովին տեղյակ և մանրամասներին ծանոթ է միայն Ամասիա համայնքի հարցվածների 2.4%-ը, Թումանյան համայնքի՝ 1,8 %-ը: Սա մատնանշում է համայնքապետարանի կողմից համայնքին վերաբերող խնդիրների լուծման գործում հանրության մասնակցայնության ցածր աստիճանը: Չնայած որ համայնքների խոշորացման գործընթացի կիզակետը ի սկզբանե հանդիսացել է հանրության մասնակցայնության աստիճանի բարձրացումը համայնքային հիմնախնդիրների վերհանման և դրանց լուծման գործում:



Գծապատկեր 13. Ամասիա համայնքի հնգամյա զարգացման պլանի վերաբերյալ տեղեկացվածությունը



Գծապատկեր 14. Թումանյան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի վերաբերյալ տեղեկացվածությունը

Գրեթե նույն պատասխաններն են հնչել այն հարցին, թե ինչ է իրենից ներկայացնում համայնքի տարեկան աշխատանքային պլանը(ՏԱՊ): Ինչպես ՀՀՋԾ-ի դեպքում, այս հարցի ժամանակ էլ հարցվողների մեծ մասը անտեղյակ են եղել ՏԱՊ-ի էությանը և բովանդակությանը: Այս մասով համայնքային իշխանություններն ունեն աշխատանք իրականացնելու կարևոր գործառույթ, քանի որ սրանք այն կարևոր բնութագրիչներն են համայնքի համար, որոնց մասին գոնե չնչին տեղեկացվածություն պետք է ունենա համայնքի յուրաքանչյուր բնակիչ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ իրազեկված բնակչության թիվն այս առումով չափազանց ցածր է և հնարավոր չէ հարցման արդյունքում ստանալ վիճակագրորեն նշանակալի տվյալներ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան աշխատանքային պլանի գնահատման գործընթացի վերաբերյալ:

Հետազոտության ընթացքում հնչել է նաև հանրային մասնակցության վերաբերյալ հարց. քննարկման շրջանակներում հարցվածները նշել են իրենց տեսակետը, թե որքանով է կարևոր համայնքային խնդիրների որոշման և դրանց լուծմանն ուղղված ծրագրերի կազմման գործընթացում համայնքի բնակիչների մասնակցությունը: Արդյունքները ներկայացված են գծապատկեր 13-ում: Համաձայն արդյունքների՝ երկու համայնքներում էլ հարցվածների ճնշող մեծամասնությունը համարում է, որ հանրության մասնակցությունը ավելի շուտ կարևոր գործընթաց է. բնակիչն ավելի լավ է տիրապետում իր համայնքում առկա խնդիրներին, քան ավագանին կամ հենց համայնքի ղեկավարը:



Գծապատկեր 15. Որքանո՞վ է կարևոր ապահովել հանրության մասնակցությունը համայնքային խնդիրների որոշման և դրանց լուծմանն ուղղված ծրագրերի կազմման գործընթացում

Վերոնշյալ հարցի հետ ուղղակիորեն կախված և միաժամանակ որպես այլընտրանք, բնակիչներին տրվել է հետևյալ ընդհանրական հարցը, թե համաձայն նրանց՝ համայնքապետարանը որքանով է հաշվի առնում համայնքի բնակիչների

կարծիքը համայնքի կառավարմանը վերաբերող որոշումների կայացման գործընթացում: Ամասիա համայնքում հարցվածների 40%, իսկ Թումանյան համայնքում՝ 53%-ից ավելին նշել է, որ բոլորովին հաշվի չի առնվում բնակիչների կարծիքը այս հարցում:

Քանի որ հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ երկու համայնքներում էլ իրազեկվածության մակարդակը բավական ցածր է, բնակիչներին ուղղվել է նաև հետևյալ հարցը, թե արդյոք վերջիններս կցանկանային մասնակցել համայնքային զարգացման ծրագրերի մշակմանը, համայնքային խնդիրների լուծման ուղիների մշակմանը, քննարկմանը: Այս դեպքում կիրառվել է «այո» և «ոչ» տարբերակները: Համաձայն հարցման արդյունքների՝ Ամասիա համայնքի հարցվածների 56%-ը նշել է, որ չի ցանկանա, իսկ 44%՝ կցանկանա մասնակցել համայնքին վերաբերող որոշումների կայացման գործընթացին, իսկ Թումանյան համայնքում հարցվածների 63%-ը նշել է, որ չի ցանկանա, իսկ 37%-ը՝ կցանկանա մասնակցություն ունենալ: Այս հարցի դեպքում էլ կարևոր է հասկանալ, թե որոնք են մասնակցել չցանկանալու պատճառները, քանի որ որպես հարցի պատասխան կարող են բացահայտվել այնպիսի խորքային հիմնախնդիրներ, ինչպիսիք են անվստահությունը գործընթացների նկատմամբ կամ անտարբերությունը: Հարցը տրվել է որպես բաց հարց և ցանկացած պատասխան, որը հնչել է պատասխանողի կողմից ընդունվել է որպես տարբերակ: Իրականացված հետազոտության արդյունքներով որպես առավել հաճախ նշված պատճառ եղել է հետաքրքրության պակասը, զբաղվածությունը, ինչպես նաև ցանկության բացակայությունը:

Ամասիա և Թումանյան համայնքում, ինչպես նաև նրանց կազմում գտնվողառանձին բնակավայրերում առկա են մի շարք ենթակառուցվածքներ, ինստիտուտներ, որոնք համայնքի բնակիչների մեծ մասին ապահովում են տարբեր աշխատատեղերով, սակայն նրանց շրջանում իրականացված հարցումները վկայում են, որ վերջիններս այդքան էլ գոհ չեն աշխատանքային պայմաններից այն առումով, որ երկրում առկա գնաճը, բոլոր տեսակի ապրանքների թանկացումները մեծ խնդիր են հանդիսանում համայնքի բնակիչների համար, ինչի արդյունքում վերջիններս չեն կարողանում բավարարել

իրենց տնային տնտեսության անդամների բոլոր կարիքները սահմանված աշխատավարձերի չափով: Հետևաբար այս ուղղությամբ ևս պետք է գործողություններ մշակել և համայնքի զարգացման հնգամյա ծրագրում ներառել: Մեր կողմից անցկացված դաշտային էթնոսոցիալական հետազոտություններից պարզ է դառնում, որ խոշորացված համայնքներում սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակը բավական ծանր է: Համայնքների խոշորացումը որևէ էական ազդեցություն չի ունեցել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական իրավիճակի զարգացման վրա:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ըստ հետազոտության արդյունքների՝ խոշորացման գործընթացի դրական կամ չեզոք ազդեցությունները Ամասիա և Թումանյան համայնքներում

- Ամասիա և Թումանյան համայնքներում ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ բնակիչների կողմից արձանագրվում միջազգային ու տեղական կառույցների կողմից խոշորացման գործընթացի արդյունքում իրականացված մի շարք ծրագրերի էական նշանակությունը համայնքների զարգացման գործում: Մասնավորապես, կարևորվել է գյուղատնտեսական տեխնիկայի ու այլ սարքավորումների ձեռքբերման և ենթակառուցվածքների բարելավման աջակցության միջոցառումները, ինչի արդյունքում խոշորացված համայնքները հնարավորություն են ստացել բարձրացնել համայնքային սոցիալ-տնտեսական ծրագրերի արդյունավետությունը:
- Հետազոտության արդյունքները վկայում են նաև, որ համայնքների խոշորացումից հետո համեմատաբար բարելավվել է ներհամայնքային կամ միջբնակավայրային ճանապարհների վիճակը: Դիտարկումները վկայում են, որ խոշորացման գործընթացից հետո Ամասիա և Թումանյան

համայնքներում իրականացվել ու իրականացվում են ճանապարհների բարեկարգման մեծածավալ աշխատանքներ։

- ՏԻՄ ներկայացուցիչների և բնակիչների կողմից արձանագրվում է, որ համեմատաբար բարելավվել է աղբահանության ու լուսավորության ծառայությունների որակը։
- Ամասիա և Թումանյան Համայնքների խոշորացումը դրական ազդեցություն է ունեցել նաև հատկապես ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացման վրա։ Մասնավորապես, համայնքների խոշորացումից հետո՝ Ամասիայում և Թումանյանում իրականացվել են զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր։ Երկու խոշորացված համայնքներում էլ զբոսաշրջության, մասնավորապես գյուղական և էկոզբոսաշրջության զարգացման մեծ նախադրյալներ կան։
- Խոշորացման արդյունքում զբոսաշրջության ներուժի կիրառումը հնարավորություն է տվել համայնքի զարգացման ներուժի դիվերսիֆիկացման, այսինքն միայն հողագործությամբ կամ անասնապահությամբ զբաղվելուն զուգահեռ համայնքի բնակիչների կողմից այլ ոլորտներում ներգրավվածության։
- Ֆինանսաբյուջետային վերլուծության արդյունքները վկայում են, որ համայնքների խոշորացումից հետո բյուջեի տարեկան եկամտային և ծախսային մասերը դինամիկ աճել են։
- Համայնքների բյուջեների ծախսերի աճի մեջ տարեցտարի առավել ցածր տեսակարար են կազմել աշխատավարձերին հատկացվող ֆոնդերը, որը տեղի է ունեցել հատկապես վարչական աշխատակազմերի կրճատման հաշվին։
- Հետազոտության արդյունքները փաստում են, որ բնակիչների մեծամասնությունն այն կարծիքին են, որ համայնքների խոշորացումը, որևէ էական ազդեցություն չի ունեցել բնակավայրերի բնակչության ժողովրդագրական իրապայմանների փոփոխության վրա։

- Անցկացված դաշտային էթնոսոցիալական քանակական և որակական հարցումներից պարզել ենք, որ համայնքների խոշորացումը որևէ էական ազդեցություն չի ունեցել նաև խոշորացված համայնքների ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և միգրացիայի դրական փոփոխությունների վրա։
- Լոռու մարզում սկսած 2018թ. և Շիրակի մարզում՝ 2020թ. սկսած բնակչության վերարտադրության մնացորդը բացասական է։ Վերարտադրության բացասական մնացորդի երևույթի կապը համայնքների խոշորացման հետ հետագա խորը գործոնային ուսումնասիրությունների կարիք ունի։

Ըստ հետազոտության արդյունքների՝ խոշորացման գործընթացի բացասական ազդեցությունները Ամասիա և Թումանյան համայնքներում

- Պաշտոնական վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների խոշորացումից հետո գրանցվել է բնակչության թվի որոշակի անկում։ Կարելի է արձանագրել, որ համայնքների խոշորացումը չի նպաստել բնակչության թվի աճին, այսինքն՝ այս մասով չի իրականացվել համայնքների խոշորացման հայեցակարգի նախատեսված դրույթները։
- Համաձայն հարցման արդյունքների, համայնքների բնակչության մեծ մասը լիարժեք տեղեկատվություն չունի, թե ինչ է իրենից ներկայացնում համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը կամ տարեկան աշխատանքային պլանը։ Այսինքն ՀՀԶԾ-ների ու համայնքի բյուջեների վերաբերյալ իրազեկվածությունը բավական ցածր է երկու համայնքներում։
- Ամասիա և Թումանյան համայնքների բնակիչների շրջանում կատարված հարցումների հիման վրա ըստ կարևորության դասակարգվել են համայնքում առկա առավել կարևոր հիմնախնդիրները՝ գործազրկությունը,

աղբահանությունը, ճանապարհների բարեկարգումը, լուսավորությունը, արտագաղթը, շրջակա միջավայրի պահպանությունը, սոցիալական խնդիրները, երիտասարդների զբաղվածության ապահովումը: Ինչպես սոցիոլոգիական հարցումների, այնպես էլ ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքում բացահայտվել են մի շարք կարիքներ և հիմնախնդիրներ, որոնք լիարժեք կերպով չեն ներառվել համայնքի զարգացման ծրագրերում, տարեկան աշխատանքային պլաններում, համայնքի բյուջեներում, ինչն էլ հիմնախնդիրների լուծման առումով հանրության բացասական կարծիքի պատճառ է հանդիսացել:

- Իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքներից պարզ է դառնում, ըստ բնակիչների կարծիքի՝ կարիքների գնահատումն ու դրանց արտացոլումը համայնքի զարգացման ծրագրերում ու բյուջեում բավարար չէ՝ անկախ հրապարակված վիճակագրական տվյալների և ցուցանիշների դրական միտումների և առաջընթացի արդյունքների:
- Ըստ հարցումների արդյունքների՝ համայնքի բնակիչների մեծ մասը վստահ են, որ համայնքների վերամիավորումից հետո իրենց սոցիալ-տնտեսական վիճակը չի կայունանալու կամ զարգանալու, այլ ընդհակառակը՝ անկում է ապրելու:
- Չնայած որ երկու համայնքներում էլ և՛ եկամուտները , և՝ համայնքի խնդիրների լուծման և ծրագրերի իրականացման վրա կատարվող ծախսերը ավելացել են նախորդ տարիների համեմատ, սակայն վիճակագրական ցուցանիշների տատանումները ցույց են տալիս, որ դեռևս խոշորացման գործընթացի՝ համայնքների կյանքի որակի բարձրացմանն ուղղված նպատակը կայուն կերպով կյանքի չի կոչվել: Անհրաժեշտություն կա նոր կապիտալ ծրագրերի և նախագծերի խոշորացված համայնքներում ներդրման, որոնք թույլ կտան ավելի լավ օգտագործել համայնքի ներուժը :
- Վերլուծելով Թումանյան և Ամասիա համայնքի բյուջեի եկամտային ցուցանիշները՝ կարող ենք փաստել, որ գրեթե բոլոր տարիներին արձանագրվել են եկամուտների հավաքագրման բարձր տեմպեր, չնայած

որ Ամասիա համայնքում 2021-ին ցուցանիշը որոշ չափով զիջում է նախորդ տարվա ցուցանիշին: Սակայն անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ այս աճը մեծ մասով տեղի է ունեցել ի հաշիվ վարչական մասի եկամուտների, իսկ ֆոնդային մասը բյուջեում շարունակել է ունենալ ցածր տեսակարար կշիռ՝ որոշ տարիների արձանագրելով բացասական միտում: Մասնավորապես, բավական ցածր են եղել ֆոնդային մասում այլ աղբյուրներից ֆինանսական ռեսուրսների ներգրավումը:

Հետազոտության ընթացքում բացահայտված, խոշորացման գործընթացի հետ ուղիղ չկապված հիմնախնդիրներ

- Հարցումների ու դաշտային աշխատանքների արդյունքում պարզվել է, որ խոշորացված համայնքների փոքր գյուղական բնակավայրերում հատկապես սուր բնույթ է կրում հանրակրթության հիմնախնդիրը, որտեղ տարի է լինում, որ առաջին դասարան չի բացվում: Առկա են գյուղական բնակավայրեր, մասնավորապես Ամասիա խոշորացված համայնքի փոքր գյուղերում՝ Ալվար, Արավետ, Արդենիս և այլն, որտեղ առաջինից յոթերորդ դասարանները իրար հետ են սովորում: Բնակավայրերում առաջին դասարան չբացվելը բացասական ազդակ է, ինչը կարող է նշանակել, որ այն դատարկվելու և հետագա տարիներին վերանալու վտանգի առջև է կանգնած:
- Համաձայն հարցումների արդյունքների՝ երկու համայնքներում էլ հարցվածների ճնշող մեծամասնությունը համարում է, որ հանրության մասնակցությունն կարևոր գործընթաց է: Մեծամասնության կարծիքով՝ խոշորացված համայնքի բնակավայրերի բնակիչներն ավելի լավ են տիրապետում իր համայնքում առկա խնդիրներին, քան ավագանու անդամները կամ համայնքի ղեկավարը:
- Խոշորացված համայնքներում որպես լուրջ հիմնախնդիր է բարձրաձայնվել նաև արտադրված գյուղմթերքների իրացումը: Գյուղացիները հիմնականում դժգոհություններ են արտահայտում իրենցից ձեռք բերվող գյուղմթերքի գնով, ինչը երկու անգամ զիջում է շուկայում վաճառվող գնին:

Առաջարկություններ

- Քանի որ կատարված վերլուծությունները վկայում են, որ բնակչության կարիքների ու առաջնահերթությունների արտացոլումը համայնքի բյուջեի մեջ թերի է իրականացվում, առաջարկում ենք համայնքի կողմից պարբերաբար իրականացնել կարիքների գնահատում՝ օգտագործելով սույն հետազոտության կողմից առաջարկվող կամ այլ գործիքակազմ: Առաջարկվում է կազմակերպել պարբերական քննարկումներ, այդ թվում՝ ավագանու նիստերում, առաջնահերթ կարիքների ու ՀՀՋԾ կամ համայնքի բյուջեում դրանց արտացոլման վերաբերյալ, համադրումների հիման վրա կատարել փոփոխություններ ու լրացումներ նշված փաստաթղթերում:
- Հաշվի առնելով համայնքում գյուղատնտեսական աշխատանքների նվազման տեմպերը՝ առաջարկում ենք Ամասիա և Թումանյան համայնքի զարգացման ծրագրերում, տարեկան աշխատանքային պլաններում և միջոցառումներում ներառել այնպիսի ծրագրային բաղադրիչներ ու գործիքակազմ, որոնց կիրառումը կնպաստի, որպեսզի համայնքի բնակչությունը շահագրգռված լինի զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով: Այդպիսի միջոցառումների օրինակներ կարող են լինել գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվող, տնային տնտեսություններին որոշակի մշակված չափանիշների հիման վրա տեղական հարկային և այլ արտոնությունների տրամադրումը և պարբերաբար կիրառումը, համայնքի բյուջեից նորարարական գյուղատնտեսական բիզնես նախաձեռնություններին մրցութային որոշակի դրամական աջակցության տրամադրումը և այլն:
- Հաշվի առնելով բնակչության կողմից առաջնահերթ համարվող խնդիրները՝ առաջարկում ենք վերանայել Ամասիա և Թումանյան համայնքների զարգացման ծրագրերի, տարեկան աշխատանքյաին պլանների և

բյուջեների կառուցվածքը՝ ՏԻՄ լիազորությունների շրջանակներում միջոցներն ուղղելով սոցիոլոգիական հարցումների արդյունքում բացահայտված, ՏԻՄ լիազորությունների շրջանակում գտնվող խնդիրների վերացմանը կամ դրանց մակարդակի նվազմանը, ինչը կխթանի նշված ոլորտների զարգացմանը: Հատկապես մեծ ակնկալիքներ են առկա գործազրկության մակարդակի նվազման ուղղությամբ, ինչի համար ՏԻՄ լիազորությունների շրջանակներում պետք է քայլեր ձեռնարկվեն բնակավայրերում նոր աշխատատեղերի բացմանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն խթանելու համար, ինչն էլ զուգահեռ կնվազեցնի բնակիչների արտագաղթն ինչպես այլ երկիր, այնպես էլ ՀՀ տարածքում այլ քաղաքային բնակավայրեր:

- Հաշվի առնելով խոշորացման գործընթացի կարևոր նպատակադրումներից մեկը՝ համայնքների և բնակավայրերի համաչափ զարգացման ապահովումը, առաջարկում ենք քննարկումների միջոցով բացահայտել և կիրառել ՀՀՋԾ և համայնքի բյուջեի բաշխման այնպիսի գործուն մեխանիզմներ, որոնք կապահովեն միջոցների հնարավորինս հավասարաչափ բաշխում և ծրագրերի համաչափ իրականացում բոլոր բնակավայրերում: Մասնավորապես, սահմանել խնդիրների լուծման ու ֆինանսավորման հատկացումներ ըստ բնակավայրերի, ՀՀՋԾ-ներում ներառելով յուրաքանչյուր բնակավայրի առաջնահերթությունն ու խնդրի լուծման ժամանակահատվածը:
- Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ցածր տեսակարար կշռի՝ համայնքի կայուն զարգացման վրա բացասական հետևանքների նվազեցման նպատակով առաջարկում ենք հաջորդ տարիների զարգացման ծրագրերում ու բյուջեներում նախատեսել կոնկրետ աշխատանքներ ու միջոցներ՝ ֆոնդային մասում եկամուտների ավելացման ու այլընտրանքային աղբյուրներից ֆինանսավորում հայթայթելու ուղղությամբ:
- Ամասիա և Թումանյան համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման տեսանկյունից կարևորելով երիտասարդների դերը՝ առաջարկում

ենք համայնքի բյուջեի միջոցներից հատկացնել միջոցներ՝ երիտասարդների շրջանում ձեռնարկատիրական հմտությունների զարգացման խթանման, ինչպես նաև բիզնես նախաձեռնությունների խթանման համար։

- Գյուղմթերքի իրացման հարցում առաջարկում ենք, որ տեղական իշխանությունները գործնական քայլեր պլանավորեն և իրականացնեն ապրանքների գնման և վաճառքի գործընթացի արդյունավետությունն ապահովելու հարցում, մասնավորապես՝ աջակցություն մթերման կետերի ստեղծման, վաճառքի խթանման նախաձեռնություններին։
- Քանի որ երիտասարդների արտագաղթը դեպի Երևան և արտերկիր երկու համայնքների բնակավայրերում էլ համարվում է կարևորագույն հիմնախնդիր, այս ուղղությամբ առաջարկվում է ՏԻՄ լիազորությունների շրջանակներում ուսումնասիրել, բացահայտել բնակավայրերում զարգացման ներուժ ունեցող ոլորտները, աջակցել խոշորացված համայնքի ներդրումային միջավայրի զարգացմանը։ Մասնավորապես Ամասիա համայնքներում կարելի է նպաստել տնայնագործության և արհեստագործության զարգացմանը, օրինակ՝ գորգագործությունը, բրդյա գործվածքների արտադրությունը, ասեղնագործությունը, հուշանվերների արտադրությունը, տվյալ գյուղի բրենդային կաթնամթերքների և մսամթերքների արտադրությունը։ Թումանյան խոշորացված համայնքում երիտասարդների արտագաղթը կարելի է մեղմել, եթե Դսեղում վերականգնվի փայտավերամշակման և կահույքի արտադրական ձեռնարկությունները, Չկալով գյուղում և Թումանյան քաղաքում վերագործարկել տանիքի կղմինդրի և հրակայուն աղյուսի արտադրության ձեռնարկությունները։ Բացի թվարկածից Թումանյանի խոշորացված համայնքն ունի ռեկրեացիոն մեծ ներուժ, որի միայն չնչին մասն է օգտագործվում։ Առաջարկում ենք նաև նպաստել կապիտալ ներդրումների կատարմանը խոշորացված համայնքի տնտեսության երեք ոլորտներում՝ զբոսաշրջությունում, անասնապահությունում և շինանյութերի արդյունաբերությունում։ Այդ ոլորտների զարգացումը ոչ միայն կմեղմի

երիտասարդների արտագաղթն, այլ նաև հնարավորություն կտա ներգաղթի։

- Որոշումների կայացմանը բնակչության մասնակցայնության բարձրացման ուղղությամբ առաջարկվում է համայնքի բյուջեից հատկացնել միջոցներ՝ ներդնելու մասնակցայնության բարձրացման մեխանիզմներ՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաները, օրինակ՝ բջջային հավելվածների ստեղծման ու կիրառման հնարավորության ներդրման միջոցով։
- Ինչպես սոցիոլոգիական, այնպես էլ ֆոկուս-խմբային հարցումների արդյունքում, կարևոր դիտարկում է կատարվել տուրիզմի ոլորտի վերաբերյալ, ըստ որի՝ այս ոլորտի զարգացմանն ուղղված համայնքի և այլ դերակատարների քայլերը կարող են ավելացնել համայնքում զբոսաշրջիկների քանակը և համայնքի զարգացման հավելյալ արդյունք ապահովել։ Բացի այդ հնարավոր կլինի համայնքի հնարավորությունների կիրառումը դիվերսիֆիկացնել, այսինքն չզբաղվել միայն հողագործությամբ կամ անասնապահությամբ։ Տնային տնտեսությունների մեծ մասը գտնում են, որ համայնքն ունի այդ ներուժը, պարզապես այդ ուղղությամբ արդյունավետ քայլեր են պետք ձեռնարկել և իրագործել։